4154

ԴԱՍԸՆԿԵՐ



491-99-2
Զ-55

1910

մԴ.

2010

9

Арм.
4-546/2-a
491.99-8
Գ-55

ԴԱՍԸՆԿԵՐ

Բ. ՏԱՐԻ

ԿԱԶՄԵՑԻՆ
ԱՐՇԱԿ ՋԻԼԻՆԿԱՐԵԱՆ ԵՒ ՏԻԳՐԱՆ ՌԱՇՄԱՃԵԱՆ

Ինքնուրոյն, փոխադրած յօդւածների եւ նկարների արտատպութեան իրաւունքը վերապահւած է։

Инв. № 6668

ԹԻՖԼԻՍ
ԵԼԵՔՏՐԱՇԱՐԺ ՏՊ. ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆՑԻ, ՊՕԼԻՑ. 7.
1910

2002
44538-ա
29603-63

1. Գիր

Կարդա՛, ա՛յ իմ խելոք մանուկ,
կարդա՛, գրեր դու ամեն օր.
Գիր կարդողի խելքն է կտրուկ,
Միտքը պայծառ ու լուսաւոր:

Գիր կարդալով՝ դու աշխարհիս
Կը ճանաչես չարն ու բարին.
Ո՛վ է խնդում, ո՛վ է լալիս,
Ո՛վ է զրկում խեղճ թշուառին:

Դու կ'իմանաս, ինչու մարդիկ
պէտք է ապրեն իրար համար.
Ի՞նչ է մարդկանց ցաւն ու կարիք,
Ի՞նչ է լոյսը, ի՛նչ է խաւար:

Կարդա՛, դու իմ խելոք մանուկ,
կարդա՛, գրեր դու ամեն օր.
Գիր կարդողի խելքն է կտրուկ,
Միտքը պայծառ ու լուսաւոր:

2. Ո՞վ է ցանում

1.

Վարժապետ, դուք ցույց տվիք, որ գարին, ցորենը, կորեկն ու հաճարը մարդիկ են ցանում. իսկ ապա ո՞վ է ցանում անտառի ծառերը, դաշտերի խոտերը, ծաղիկները. միթե դրանք էլ գյուղացիք են ցանում, հարցրեց Արամը։



—Ո՞վ կարող է Արամի հարցերին պատասխանել։

Աշակերտները գլխի չընկան։

2.

Արշակ, վազիր, բռնիր հովանոցի նման այն մեծ չոր բույսը, ասաց վարժապետը։

Արշակը բռնեց և բերեց։

—Տղերք, այս բույսն ո՞վ էր տանում։

—Քամին, քամին, կանչեցին ամենքը։

—Ապա նայեցեք և ասացեք, ի՞նչ կայ սրա ծայրերին։

—Սերմեր, սերմեր, ասացին նրանք։

—Երբ քամին այս չոր բույսը գլորելով տանում է, ի՞նչ են լինում նրա վրայի սերմերը։

—Թափւում են, թափւում են,՝ պատասխանեցին աշակերտները։

—Ո՞րտեղ։

—Էստեղ, էնտեղ։

—Ուրեմն քամին սերմերը ի՞նչ է անում։

—Քամին սերմերը ցանում է։

—Այժմ ասացէք, երբ խոտերի, ծաղիկների սերմերը հասնում են, քամին նրանց ի՞նչ է անում։

—Քամին նրանց քշում տանում, ամեն կողմ ցանում է։

—Ուրեմն բացի գյուղացուց էլ ո՞վ է ցանում։

—Քամին, քամին, կանչեցին աշակերտները։

3.

—Մանուկները մտան անտառ։

—Աստղիկ, տես, ի՞նչ է անում այն թռչունը։

—Նա խնձորը կտցում է, նա խնձորը ուտում է։

Տես, տես, վարժապետ, էն մէկն էլ խնձորը տարաւ։

Այո, Նունիկ, նրանք տանում են նոյնպէս տեսակ տեսակ պտուղներ, մոշ, մորի, հաղարճ և այլն։

—Արամ, այդ պտուղների մէջ ի՞նչեր կան։

—Կորիզներ, կորիզներ, ասաց Արամը։

—Ճիշտ է. թռչունները տեսակ տեսակ պտուղներ զանազան կողմեր տանում, ուտում են և շատ անգամ կորիզներ են թափւում, նրանցից թփեր, ծառեր են բուսնում։

—Այժմ հասկացայ, ասաց Բաբկէնը. մեր գիւղի աւերակ վանքի գմբէթի վրայ մի մասրի թուփ է բուսել. նա ծաղկում է, կարմիր մասուր է տալիս. Նշանակում է, այստեղ կամ քամին և կամ թռչուններն են այդ սերմը ցանել. այո՞, վարժապետ։

—Ճիշտ է, պատասխանեց ուսուցիչը։

—Այժմ ասացէք. ուրեմն էլ ո՞վ է ցանում։

—Թռչունները, թռչունները, ասացին աշակերտները։

4.

Մանուկները շարունակեցին իրենց ճանապարհը, հասան գետակի։

—Տղերք, տեսէք ի՞նչ է բերում այս ջուրը։

—Դրանք սերմեր են, դրանք սերմեր են, կանչեցին մի քանիսը։

—Նշանակում է՝ ջուրն էլ ցանում է, ասացին շատերը։

Մանուկներն անցան խոտերի միջով։

—Միկիչ, էդ ինչ է կպել շորիդ։

—Խոտի սերմեր, պատասխանեց Միկիչը։

—Ուրեմն մենք էլ ցանում ենք, հարցրեց Զարիկը։

—Ի հարկէ, ի հարկէ, ասաց Տիգրանը։

—Ճիշտ է, վրայ բերեց վարժապետը. արդէն ուշ է, պէտք է վերադառնալ. ապա մի անգամ էլ ասացէք, այսօր մենք ինչ սովորեցինք։

---

3. Աշուն

Աշուն է...
Ամառն անցաւ, եկաւ աշուն՝
Խաղողի լաւ ժամանակ,
Թէև տեսքով շատ չէ նախշուն,
Բայց պտղաբեր եղանակ։

Շաշխուն է...
Մէկ էլ տեսար՝ արև կ'անի,
Խառնաշփոթ եղանակ,
Յանկարծ, մէկ էլ՝ անձրև կ'անի
Մի քանի օր շարունակ։

Ջա՜ն, ջա՜ն, ջա՜ն...
Ամբարները լիքը ցորեն,
Տարին առատ, գինին շա՜տ.
Տես, բոլորն ո՜նց ուրախ են,
Տարին կ'անցնի անարատ։

---

4. Կլեկչի Կարոն



Առաւօտ լուսածէգին ոտքի վրայ է վարպետ Կարոն. աշուն է. հազար ու մի պակաս կայ.քուն ու դադար չունի։ Օջախը կրակ է անում, աման-չաման հաւաքում է և կամացուկ քթի տակին խօսում.

—Հոգիս էլ դուրս գայ, մինուճար տղիս, Մացակիս ուսումից չեմ զրկի. աւելի խեղճ կապրեմ, պանիր հացի տեղ չոր հաց կ'ուտեմ. թող Մացակս գրել կարդալ սովորի, ինձ պէս անճար չմնայ։

Յանկարծ Մացակը ուրախ-ուրախ ներս վազեց։

—Ապի, ուսումնարանի փողը, հայերէն գրքի փողը տուր, վարժապետն ուզում է. ապի ջան, ախր հիմի ես երկրորդ բաժանմունքն եմ։

—Քեզ մատաղ ապին, Մացակս, առա երկու աբասի, գրքի փող արա. ուսումնարանի փողն էլ մի երկու օրից յետոյ կ'ու-

ղարկեմ. վարժապետին շատ խնդրի, սպասէ։ Դէ, Մացակ ջան, վազիր, չուշանաս։

Հէչ դարդ չունիմ. Մացակս ինձ էլ մխիթարանք է, մօրն էլ, քոյրերին էլ. հէչ դարդ չունիմ. գործի ժամանակ գործ կ'անեմ. գործ չեղաւ, աշուղ կը դառնամ, սազիս հետ կըխօսեմ. սազիս ձէնին կը գան մուշտարիներ. սազիս բըլբուլ լեզուին մեռնեմ...

Ես վարպետ եմ՝ դարդ չունիմ,
Ես աշուղ եմ՝ ցաւ չունիմ,
Ա՛խ, ես որքան անճար եմ,
Գրել կարդալ չգիտեմ։

Էն ինչն է
Արտը սիպտակ, սերմը սև,
Ձեռքով ցանեմ, աչքով հնձեմ։

Մարօի տնակը.

„Տես, տես Մարօ, իմ նաւակն ինչ հիանալի է լողում ջրի երեսին. ինչ դէ-ար նայիր, տես ինչ բարձր սար էլ եմ շինել. էլ չասես, թէ Ժայկը ծոյլ է, մի բան չէ. հա, հա, հա. մի լաւ տես, շորս աչքով նայիր նաւակիս„:

— Ժայկ, դու էլ իմ գեղեցիկ տնակին նայիր.. տես փոքրիկ լուսամուտներ, դռնակ, կտուրին էլ նստած սիրուն արագիլ: Մեծ մեծ մի բրդիր, դէ, ասա, տեսնեմ.—

Էն ինչն է,
Սև է սարի նման, սպիտակ է կաթի նման, կը ղորորայ մարդի նման:

6. Ծառերի վէճը

Անտառի մէջ ծառերը վիճում էին։

—Ես ծառերի թագաւորն եմ, ասում էր կաղնին. իմ արմատները երկրի մէջ շատ խոր են և շատ տարածուած. տեսէք, իմ բունը հաստ է, իմ ճիւղերը երկաթի պէս ամուր, երկինք բարձրացած. իմ տերևները խոր կտրտուած են, փայլուն ու պինդ են։ Ես միշտ կռւում եմ փոթորկի, քամու և կայծակի հետ. ես միշտ այսպէս ամուր եմ և հարիւրաւոր տարիներ գլխովս անցած են։

—Ի՞նչ ես պարծենում դու քո հասակով, քո ճիւղերով, ասաց խնձորենին. ինչո՞ւ ես դու պէտք, ի՞նչ ես տալիս։ Միայն խոզերն են քեզ այցելում. իսկ ես տալիս եմ մեծ մեծ խնձորներ, անուշ, թթւաշ համեղ պտուղներ. ինձ մօտ գալիս են ծեր, ջահել, կին ու տղայ, հարուստ ու աղքատ. իմ պտուղները ամեն սեղանի զարդարանք են։

Մի քիչ սպասէք, ասաց մայրին, երբ ձմեռ գայ, ես ձեզ հետ կը խօսեմ. այն ժամանակ դուք բոլորդ չոր չոր ճիւղերով կանգնած կը մնաք, իսկ ես իմ ասեղներով կանաչ կը մնամ։ Ամեն տարի մարդիկ ինձ զարդարում, տօնածառ են շինում։ Ցուրտ երկրներում էլ մարդուն փայտ եմ տալիս. իմ իւղոտ փայտից տներ են շինում, յատակ, առաստաղ պատրաստում, վառարան, թոնիր վառում, փափուկ հաց թխում։

---

7. Խոզն ու կաղնին

Մի դարևոր կաղնու տակ
Խոզը ագահ ու անյագ
Էնքան կաղին զըլխտուեց,
Որ ցած ընկաւ ու փռւեց.
Փըռւեց, չըռւեց ու քնեց.
Քնեց, քնեց, որ զարթնեց,
Դունչը տարաւ ու մէկից
Ծառը փորեց պինդ տակից։

«Քո արածը, սպասէ,
Չէ՞ որ ծառին վնաս է,
Նա կը չորնայ արևից»,
Ագռաւն ասաւ վերևից։
—Չորանում է՝ չորանայ,
Ինձ ի՞նչ օգուտ, որ մնայ,
Իսկի էլ չեմ ափսոսում,
Տակից էն խոզն էր ասում.
Միայն կաղին ունենամ,
Ուտեմ, ուտեմ, գիրանամ։

—Այ ապերախտ խոզենի.
Ով քեզ նման վիզ ունի,
Իր կոյր աչքով չի տեսնի,
Որ կաղինը հիւթալի
Կանաչ ճիւղերս են տալի.
Ասաւ կաղնին խոզուկին՝
Էն կախգլուխ կուզիկին։

8. Չար մկնիկը

1.

—Միաու, միաու, մլաւում էր կատուն մառանում։

—Միաու, միաու, պատէ-պատ էր թռչկոտում կատուն մառանում։

—Ա՜խ, եթէ ձեռքս կ՚ընկնես, ես քո հոգին կը հանեմ, ա-սում էր կատուն։

—Էդպէս կը դաղեմ, էդպէս հոգիդ կը հանեմ, ասում էր մուկը և առաստաղից կախած մրգերի կախաններին վրայ ծածը-ւալով դէս ու դէն էր վազվզում։

Կատուն բարկացաւ, բայց ի՞նչ օգուտ. նա մի անկիւն քաշւեց, փուեց յատակին և քնած ձևացրեց։

—Վախկոտ, վախկոտ, ո՞ւր փախար, ասում էր մուկը։

Կատուն բարկացաւ, բայց տեղից չշարժւեց. նա աչքի տակով նայում էր, մկի արածները տեսնում էր։

2.

Մուկը գնաց կատւի գլխին կախած տանձի շարաններին վրայ նստեց և արագ արագ տանձի պոչից կծեց, թըրը՜մբ... տանձն ընկաւ կատւի գլխին։

Կատուն վեր թռաւ, գժւածի պէս այս ու՞այն կողմն ըն-կաւ, մլաւեց, կանչեց։

—Հա՛, հա՛, հա՛, ծիծաղեց մուկը վերևից, քունդ անուշ, ի՞նչ լաւ քնեցիր։

3.

Կատուն համբերեց, շաբաթներ համբերեց։ Շատ՞կախան-ներ՝ տանձ, խնձոր, խաղող, սերկևիլ մուկը կերել, փչացրել էր։ Մի անգամ էլ նա խնձորի վրայ նստած կրծում էր, կե-ղևներն ու կորիզները կատւին էր գցում և ասում.

—Կե՛ր, մի կեր տես ինչ համեղ է։

Բայց մէկ էլ յանկարծ խնձորի պոչը կտրւեց, մկի հետ թըրը՜մբ կատւի գլխին։

Կատուն վեր թռաւ. ծւծւանին առաւ իր թաթերի մէջ, պինդ սեղմեց և հանգիստ եկաւ իր տեղը։

— Դէ գնա՛, որտեղ քոնն ասես, ինձ էլ այնտեղ ասա, ասաց բարկութիւնն իջած կատուն և սկսեց անուշ անել մկան թարմ միսը։

Կատւի խաղը մկան մահ է։

Կատու.

Փիսիկ, փիսիկ, դու չար փիսիկ,
Շատ սիրուն ես, խորամանկ ես,
Մետաքսապատ թաթեր ունես,
Սուր եղունգով ճանկեր ունես։
Ականջներդ շուտ են լսում,
Մեծ աչքերդ մթնում փայլում,
Երկար բեխերդ ոլորած,
Խեղճ մկներին մահ ես տալիս։
Քո ընկերիդ երբ տեսնում ես,

Պոչդ այս ու այն կողմն ես շարժում,
Մէջքդ ծալում, կռացնում,
Աչքերդ փակ մռռացնում.
Բայց թէ յանկարծ մի խեղճ մկիկ
Մի անկիւնից դուրս է ընկնում,
Քո պողպատէ թաթիկներով
Գլխին խփում ես, սպանում:

10. Տերևները

1.

Մենք ծառերի զարդն ու զարդարանքն ենք, ասացին տերևները. առանց մեզ ինչու նման կը լինեն ծառերը. մենք սիրուն ենք, կանաչ ենք։ Մեր ստուերի մէջ մարդիկ, կենդանիները հանգիստ են առնում. մեր ստուերի մէջ ամեն մի թռչուն իր բունն է շինում, իր բունն է շինում, ուրախ երգ երգում։ Մենք ենք ծառերի զարդն ու զարդարանքը։

2.

Ինչ էլ որ ասէք, իրաւունք ունիք, ասացին արմատները. մենք ձեզ խնդրում ենք, մի քիչ ցածրացէք, քիչ ներքև նայէք և դուք կը տեսնէք, թէ մենք ինչ բան ենք, ձեզ ինչ ենք տալիս։ Աշնան վերջերին դուք էլ կը թափուէք, ձեզնից յետոյ եկող տերևներին էլի կեանք կը տանք, էլի կը պահենք և այսպէս ահա շատ շատ տարիներ։ Հիմա էլ կ'ասէք, որ միայն դուք էք զարդ ու զարդարանք։

---

11. Հանելուկ

1.

Փոքրիկ Արմիկն ամեն առաւօտ շուտ վեր էր կենում. շուտ վեր էր կենում, իր փոքրիկ հօտը միշտ դաշտ էր քշում, արածեցնում։ Մի օր էլ նրան տէրն ասաց.—Արմիկ, քո հօտն այսօր տար քաղաք, բոլորը ծախիր. միայն մի պայման՝ փողն էլ բերես, հօտն էլ բերես և ոչ մի ոչխար չպակսեցնես։

2.

Արմիկը զարմացաւ. նա մտածում էր, հա մտածում. վերջը երբ տեսաւ, որ հնար չկայ, սրտի ցաւից լաց եղաւ։
Ինչու ես լալիս Արմիկ, հարցրեց մի աղջիկ։

Արմիկը պատմեց իր սրտի ցաւը։

—Էդ շատ հեշտ բան է, ասաց աղջիկը. քո ոչխարներին խուզիր, բուրդը ծախիր քաղաքում, փողն էլ, հօտն էլ առ՝ տուն տար։

—Ա՜յ քեզ լաւ խորհուրդ, ասաց Արմիկն ու այդպէս էլ արաւ։

Պստիկ է, բայց ճստիկ է։

12. Սրամիտ մոլլան

Փաշի որդին միշտ ծաղրում էր մոլլին. մոլլան չկարողանալով համբերել, ասաց.

—Յիմար մի՛ լինիր հօրդ պէս, խելացի եղիր։

—Փաշան բարկացաւ և բացատրութիւն պահանջեց։

—Տէր, ես քո որդուն լաւ խրատ եմ տւել, ասաց մոլլան. ես ասացի. յիմար մի՛ լինիր, հօրդ պէս խելացի եղիր։

Ուռենի.

Սիրուն ուռենի, Սիրտդ է ծարաւել,
կանաչ ուռենի, արևն է վառել,
ծիւղերդ կախ կախ, որ էդքան զահել
ինչու չես ուրախ: գլխիկդ ես ծռել,
վշտոտ ես դառել.
ծնկիդ ես խփում,
արցունք ես թափում:

14. Ճանճը

1.

—Օգնեցէ՛ք, օգնեցէ՛ք, խեղդւում եմ, կանչում է կաթի մէջ ընկած ճանճը. թևերս չեմ կարող շարժել, ազատեցէք, քոյրիկներ։

Ճանճի ընկերները ուշք չէին դարձնում. նրանք թռչկոտում էին սեղանի վրայ դրած կարագի, մեղրի, շաքարահացի վրայ և նրանց համտես էին անում։

Տը՜զ, տը՜զ, տը՜զ...

—Մայր պիծակ, ազատիր ինձ, ասաց ճանճը։

—Ժամանակ չունեմ. բնիս մէջ տասներկու ձագ ունիմ քաղցած, պէտք է նրանց կերակուր հասցնեմ։

Բայց ահա մի մեղու մօտեցաւ ամանին։

—Օգնիր ինձ, ազատիր այս նեղ դրութիւնից, աղաչեց նրան ճանճը։

Մեղուն ուշք չդարձրեց, հեռացաւ գնաց։

—Է՜յ, բարեկամ, մեծ կապոյտ ճանճ, ազատիր ինձ, խեղդւում եմ։

—Շատ ծիծաղելի ես. ինչ յիմարութիւն է գալ կաթի մէջ ընկնել, ասաց ճանճը. այսօր հինգ խոհանոց եմ մտել, ոչ մի տեղ միս չեմ գտել, որ ձուեր ածեմ։

2.

—Ես ինչ դժւար է մեր կեանքը, ասաց ճանճը. որ կողմը դառնաս, որ կողմը շարժւես՝ վտանգ է. մէկ թէյի մէջ ես ընկնում, մէկ ջրի, մէկ կաթի, մէկ կերակուրի, ո՛ր մէկն ասեմ։ Տանից էլ դուրս գաս՝ ծտերն ու ծիծեռնակներն են մեզ բռնում՝ ուտում. գիշերն անգամ հանգիստ չունինք, չղջիկների ձեռքից չենք պրծնում։



29603-63

Սա ի՞նչ կեանք է։

Էս ճանճն ինչո՞ւ է կաթի մէջ ընկել, ասաց տանտիրոջ փոքրիկ աղջիկը. նա ճանճին հանեց, մի կողմ դրեց։

3

Ճանճը հանգստացաւ. ոտքերով մաքրեց թևերը, փորը, կուրծքը ու թռաւ գնաց ձիու մէջքին նստեց։ Այնտեղ մի ուրիշ ճանճ լաց լինելով պատմում էր և ասում.

—Բակի աղբի մէջ վաթսունից աւելի ձու ածեցի, որ ձագերս տաք տեղ և լաւ սնունդ ունենան. նրանք արդէն մեծ մեծ սպիտակ որդեր էին դարձել. ես շատ ուրախ էի, որ նրանցից մեծ մեծ և ուժեղ ճանճեր պէտք է դուրս գային. բայց մի օր էլ... օ՜հ, ի՞նչ ասեմ. աքաղաղն ու հաւերը բջուջ արին, նրանց կերան։

Այս խօսքի վրայ ձին պոչով խփեց, ճանճերին ներքև գլորեց։ Երբ մեր ճանճը ուշքի եկաւ, տրքտքալով մի տեղ հասաւ, հանգստացաւ, թռաւ՝ մտաւ մի խոհանոց։

4.

Այստեղ ճանճերը իրար խառնուած խօսում էին։

—Ի՞նչ է պատահել, հարցրեց մեր ճանճը։

—Մի՞թէ չես իմանում, ասաց մի մեծ ճանճ. տանտիկինը թակարդ է սարքել. ով այնտեղ գնում է, կպչում, մեռնում է. մեզ ուզում են կոտորել, ոչնչացնել։

—Բայց չէ՞ որ մենք նրանց վատ բան չենք արել, ասաց ուրիշը և այնչափ էլ քիչ ենք ուտում որ...

—Ի՜նչ չար են մարդիկ, ինչո՞ւ են մեզ չարչարում, վրայ բերեց երրորդը։

—Կարո՞ղ էք մտածել, քոյրիկներ, տանտէրը մէկ օր պատմում էր, իբր թէ մենք ճանճերս մարդկանց վնասում ենք, կեղտ, հիւանդութիւն ենք տարածում։

—Ես առաջարկում եմ հեռանալ էս տանից, ասաց մի ճանճ։

—Ո՛չ, ո՛չ, տըզտզացին ամէն կողմից. էստեղ լաւ է, էստեղ ուտելիք շատ կայ։

—Իսկ ի՞նչպէս ազատուենք թակարդից։

—Մենք բոլորին կասենք, որ էդ թակարդին չմօտենան։

—Գեղեցիկ միտք, գեղեցիկ, ասացին բոլորը և մնացին։

Ճանճը մի բան չէ, բայց սիրտ է խառնում։

15. Արծուի սէրը

1.

Վո՜ւ վո՜ւ, ղո՜ւ ղո՜ւ, ճչում էր արծուիը վերևից։

—Էս ո՞վ է հասել իմ բարձր բնին, էս ո՞վ է տարել իմ միակ ձագին. ես նրան բզիկ բզիկ կանեմ, կանչում էր արծուիը և բարձր թռչելով վո՜ւյ-վո՜ւյ էր կանչում։ Նա արագ թռաւ, ամէն տեղ եղաւ, սրատես աչքերով ամէն ինչ տեսաւ, բայց իր ձագին ոչ մի տեղ չգտաւ։



Ճղչաց արծիւը, գիլ գիլ ձայներով նա ղո՜ւ ղո՜ւ կանչեց, էլի կրկնեց, էլի նա կանչեց, կանչեց ու կանչեց. վերջապէս նա խուլ ղո՜ւ ղո՜ւ լսեց։

—Որսորդի պարկիցն է էդ ձայնը գալիս, որսորդի մօտն է իմ ազիզ ձագը, ասաց արծիւը։ Նա նորից կանչեց, նորից իմացաւ իր ձագի տեղը։

Սրանից յետոյ արծիւը գիշեր ու ցերեկ էլ հանգիստ չունէր, ամեն ժամանակ ձագին էր կանչում, որսորդի կորից նա չէր հեռանում։ Սրատես աչքով նա շատ բարձրից ամեն ինչ տեսնում, ամեն բան դիտում, ձագին էր փնտռում։

2.

Մի առաւօտ էլ որսորդի կինը վանդակում դրած արծւի ձագին բակը դուրս բերեց. նոյնպէս դուրս բերեց իր միակ որդուն, ծառի տակ դրեց։

Բայց մէկ էլ յանկարծ բակի հաւերը, բադերն ու սագը ճղճղալով անկիւններ փախան. ծակ ու ծուկ մտան կատուն ու շունը։

—Արծիւը եկաւ, արծիւը հասաւ, փախէք հա՜ փախէք, ճղչացին ամենքը, վա՜յ վա՜յ կանչեցին։

3.

Կայծակի նման՝ արագ թռիչքով արծիւը իջաւ. արծիւը իջաւ, կեռ ուժեղ կտցով որսորդի փոքրիկ մանկանը բռնեց ու վերև տարաւ։

—Տարաւ, հա՜յ տարաւ, մանկանը տարաւ, կանչեց մի աղջիկ։ Մանուկի մայրը իսկոյն վեր թռաւ. աչքերը սևացան, ոտքերը ծալւեցին, երբ նա իր մանկան արծւի կտցում բարձրումը տեսաւ։

Մանուկի մայրը շուտ գլխի ընկաւ, վանդակի միջից արծւի ձագին իսկոյն դուրս բերեց, իր ձեռքում բռնեց։ Փոքրիկ արծիւը իր սուր կտցով հարւած էր տալիս կնոջ երեսին,

սուր մագիլներով ձեռներն էր ճանկում. արիւնը կաթ կաթ նրա երեսից, քթից, ձեռքերից ծոր ծոր հոսում էր. բայց մօր պէտքը չէր։

4.

—Ահա քո ձագը, ճղչում էր մայրը և ազատ թողեց։

Բաւական բարձրում արծիւը կանգնեց, ամեն ինչ տեսաւ։

—Իմ որդուս յետ տուր, արծիւ, ա՜յ արծիւ, կանգնած կանչում էր մայրը քաջասիրտ։

Արծիւը իջաւ, հանգիստ, շա՜տ հանգիստ մանկանը դրեց նա գետնի վրայ և ուրախ ճիչով իր ձագուկի հետ սուրալով գնաց։

Էն ի՞նչն է՝ սև սալա, սպիտակ սալա, խաթուն մէջը կը սըւըլայ։

16. Կռունկներ

Ո՞ւր էք գնում շարան-շարան,
Հէյ, դուք, սիրուն կռունկներ,
Ո՞ւր էք թռչում այդպէս արագ
Մեր աշխարհից հիւրասէր։

Չլինի՞ արդեօք մեր վաթանը
Դուք նեղ գտաք ձեզ համար,
Եւ շտապով դուք թռչում էք
Մի երջանիկ նոր աշխարհ։

Բայց ա՛խ, գիտեմ, դուք էլ ինձ պէս
Էս վաթանին գերի էք,
Դուք էլ ինձ պէս՝ հէյ կռունկներ,
Մեր լեռների փերին էք։

Եւ պիտի գաք դարձեալ շտապ
Էս վաթանը մեր սիրուն,
Երբ հեռանայ սև ձմեռը,
Երբ որ բացւի նոր գարուն...

Խելոք մարդ.

Ճանապարհին ավազակները ուզեցին մեկին թալանել: Նրանց ձեռքից ազատվելու համար, մարդը փախավ. բայց երբ տեսավ, որ ավազակները մոտենում են՝ ուզեցավ թաքնվել մոտիկ այրի մեջ: Մեկ էլ յանկարծ նայեց, տեսավ, որ քարայրի բերանին սարդը ոստայն էր հյուսել. նա մտածեց, կզզոլ կերպով ոստայնի տակից սողալով մտավ այնտեղ:

—Ներս մտնենք այս այրը, ասաց ավազակներից մեկը, գուցե նա այստեղ է թաքնվել.

—Նա այդտեղ չէ մտել, չես տեսնում, սարդի ոստայնն անվնաս է մնացել: Այսպես մտածելով նրանք հեռացան և մարդն ազատվեց

---

18. Աքաղաղի ընտանիքը

1.

Ծուղրուղու, ղու ղու ղու, կանչեց աքաղաղը իր թառից։
Հաւերը զարթնեցին, գլուխները հանեցին թևերի տակից։

—Այս գիշեր մի լաւ երազ եմ տեսել, ասաց մի հաւ. գարուն անձրև էր գալիս և մեր բակը լցւել էր։

—Իսկ ես մի մեծ, շատ մեծ թրթուր էի գտել, ասաց ուրիշը, ես բոլորիդ կանչեցի, որ միասին ուտենք, բայց նա շուտ փախաւ։

—Ի՜նչ լաւ երազներ էք տեսել, ասաց մի վառեկ. իսկ ես մի վատ, շա՜տ վատ երազ տեսայ. խոհարարը ինձ շամփուրի վրայ խորովում էր։

—Շամփուրի՜ վրայ... կրկնեցին ամենքը սարսափած։

—Զարմանում եմ, որ ուրիշ խօսելու բան չունիք, ասաց մի ծեր հաւ. երազն ի՜նչ է, որ հաւատում էք։

2.

Հավաբունը բացին. բոլորը դուրս գնացին։ Սպասեցեք, սպասեցեք, ասաց աքաղաղը. ես ձեզանից դժգոհ եմ. ինչո՞ւ եք մտնում բանջարանոցները, ինչո՞ւ եք հարևանների սոխը, համեմը, կոտեմն ու թարխունը կտկտում. ուզում եք, որ ամեն տեղից մեզ դուրս քշե՞ն։ Զգույշ կացեք, միւս անգամ այդպես բան չանեք, ապա թե ոչ՝ ես իմ կտցով ձեզ կը պատժեմ։

—Դու էլ, սիրուն վառեկ, շատ ագահ ես. երէկ ձեր մայրը քեզ և քոյրերիդ համար թրթուրներ էր գտել, որ միասին բաժնէիք, բայց դու մենակ ես կերել. այդ լաւ չէ, ընկերներին մենք չենք սիրի։

Դու էլ, կոլոտ վառեկ, ինչո՞ւ քո ձուերը խոտի դէզի վրայ ես ածում. հաւաբնում տեղ չկա՞յ, ինչ է։

—Ագռաւը իմ ձուերը վեր է առնում, չի թողնում, որ ես թուխս նստեմ, ասաց կոլոտը։

— Նա լաւ է արել, դու դեռ ջահել ես, քանի մէկ օր չես կարող ձուերի վրայ նստել և համբերել։

Մի բան էլ ասեմ, հաւեր. վերջին օրերս ձեզանից մի քանիսը թոյլ կեղևով ձուեր են ածել. ո՞վ է մոռացել կրի մասեր, սպիտակ քարեր ուտել. չե՞ք իմանում, որ ձուերի կեղևները նրանք են կազմակերպում։

Այժմ գնացեք և ձեզ լաւ պահեցեք։

3.

Բոլորը դուրս եկան. մի քանի հաւեր բարձրացան աղբի վրայ, քջուջ արին. նրանք թրթուրներից լաւ նախաճաշ արին.

Մի քանիսն էլ գնացին աքաղաղի հետ. սա իր սուր և ուժեղ մագիլներով հողի տակից ճիճուներ, որդեր հանեց. հաւերը մեծ ախորժակով կերան։

Ջո՜ւ Ջո՜ւ ջո՜ւ, կանչեց ջահել աղջիկը և դեղին գարի շաղ տուեց։

Բաղցածն երազում փլաւ է տեսնում։

---

19. Աքլորն ու Մարգարիտը

Օրւան մէկը մի աքլոր
Քջուջ-մջուջ անելիս՝
Տեսաւ մի հատ մարգարիտ
Աղբի միջին փայլելիս։
Կտցեց, ասաւ. «Էս ի՞նչ է.
Ինձ հարցնես, ոչինչ է։
Այ վայը տամ էն մարդին,
Որ գին կըտայ էս զատին.
Իսկ ինձ համար մի գարին
Արժէր էսպէս հազարին»...

---

20. Խելօք մրջիւններ

—Ի՞նչպէս ազատեմ էս անպիտան մրջիւններից, ասում էր մայրը որդուն. հազիւ կարողացայ մեղրի ամանից հեռացնել. զզւելի են, ամբողջ տան մէջ տարածւել են։ Որդին առաւ մեղրով ամանը, թելով կապեց, առաստաղից կախեց։ Ամանի մէջ մի մրջիւն էր մնացել. երբ սա կերաւ կշտացաւ, ուզեց դուրս գալ. այս ու այն կողմ նայեց, իջնելու տեղ չգտաւ։ Շուտով նա գլխի ընկաւ, թելի վրայով բարձրացաւ, առաստաղին հասաւ, այստեղից էլ պատի վրայով իջաւ։

Քիչ յետոյ մրջիւնները շարան շարան պատի վրայ բարձրացան, առաստաղից կախած ամանը մտան։

Ինքը չկայ թիզ ու կէս,
Արարմունքը գազ ու կէս։

գրիկ տոլման .

Ցրիգոր պապը իր թոռնիկի հետ եկաւ խնամոնց տուն : Այտուա Անաանը որ տե_սաւ՝ դէմ վազեց .–

— Բարո՜վ եկար, հազար բարի · ինչպէս ես, ինչպէս է Նապիկ նանը : ինչպէս են տղերքը, հարսները, աղջիկները, երեխաները . . .

— Շնորհակալ եմ, շնորհակալ, լաւ են լաւ :

— Խնամի Ցրիգոր, բաղդի վրայ ես . հէնց իմ պիտի ճաշենք . համեղէ՜ . համեղէ՜ :

ճաշը պատրաստեցին . Ցրիգոր պապը որ գրիկ տոլման տեսաւ , զարմացաւ :

— Խնամի Անաան, գիտես ինչ . իմ Մերա կե_րակուրը թոնրից հանում, մի աման աառը ջուր էր լցնում ու յետոյ բերում . էդպէս շատ համեղ էր լինում :

— Քո արևը, հէնց նոր մի աման ջուր լցրի

---

22. Մոլլի գրազը

—Ես քեզ ջուրը կը տանեմ, ծարաւ կը բերեմ, ասաց մոլլան հարևանին։

—Չե՛ս կարող։

Նրանք գրազ եկան և գնացին։ Երբ գետին հասան, մոլլան ասաց.

—Ես չեղաւ, էս չեղաւ. երբ վերադառնանք, ես պիտի ասեմ՝ չխմեցիր, դու պէտք է ասես՝ խմեցի. ճուր է մեր վկան, որ հաստատի։

—Եթէ այդպէս է, գնանք վկայ բերենք, ասաց հարևանը։ Նրանք վերադարձան. մի մարդու պատահելով, մոլլան հարցրեց հարևանին.

—Մենք գետը գնացի՞նք։

—Գնացինք։

—Դու ջուր խմեցի՞ր։

—Ո՛չ։

—Ուրեմն ես տարայ, տուր գրագս։

Հարեանը նոր գլխի ընկաւ, որ մոլլան իրեն ջուրն է տարել և ծարաւ յետ բերել։

---

23. Մայրը

1.

—Ես դողում եմ, ես մրսում եմ, լալով ասում էր փոքրիկ կապիկը։ Նա որբ էր մնացել։ Հարեան կապիկն երբ այս տեսաւ, մօտեցաւ նրան, գիրկն առաւ ու տաքացրեց։

—Լաց մի լինիր, սիրելիս, ասում էր նա. ես քեզ կը պահեմ, ես քեզ կը մեծացնեմ։

Մայր կապիկն ամեն օր ձագի համար պտուղներ, միջատներ էր բերում և կերակրում։ Երբեմն էլ նրան գիրկն առած՝ ծառից ծառ էր թռչկոտում, թռչունների բներից ձուեր հաւաքում, նրան էր տալիս։ Փոքրիկ կապիկը փաթաթւում էր մօրը, համբուրում և ուրախ ուրախ խաղում էր։ Մայրը նրան որդու պէս սիրում էր։

2.

Մէկ անգամ կապիկները ծառերից իջան և ջուր էին խմում. յանկարծ թփերի միջից մի շուն դուրս պրծաւ և հաչելով՝ կապիկների վրայ յարձակւեց։ Բոլորը թռան ծառերի վրայ և թագ կացան։ Փոքրիկ կապիկը չկարողացաւ, նա բարձրացաւ մի մեծ քարի վրայ և վախից դողում էր. իսկ շունն ատամները բաց՝ ուզում էր նրա վրայ յարձակւել։

3.

Մայր կապիկը երբ տեսաւ, որ որսորդը հրացանով մօտեցաւ իր ձագին, էլ չվախեցաւ. կայծակի արագութեամբ նա յետ դարձաւ, ատամները բաց՝ կատաղի կերպով շան վրայ յարձակւեց։ Շունը վախեցաւ, յետ յետ քաշւեց։ Անվախ կապիկը թռաւ, ձագին հասաւ, գրկեց նրան ու փախաւ։

Կապիկի քաջութիւնը և սէրը որսորդին դուր եկան. նա իր հրացանը էլ չարձակեց։

---

24. Կապիկն ու ակնոցները

Ծերացել էր կապիկը,
Լաւ չէր տեսնում պապիկը.
Առաւ ակնոց,
Մի ողջ կապոց.
Ակնոցները փոքր ու մեծ
Ձեռքերին էսէնց էնէնց,
Մին դնում է իր գլխին,
Մին էլ պոչի մէջտեղին,
Մին լիզում է, թքոտում,
Մին էլ սրբում հոտհոտում,
Հա փորձում է, հա փորձում,
Բայց ակնոցը չի գործում.

Էն պսպղուն ապակին
Լոյս չի տալիս պապիկին։
«Կորչեն, գոռաց, ջուխտ ու
կենտ,
Նա է յիմար, նա է խենթ,
Ով լսում է հետհետին
Մարդկանց հազար մի ստին.
Սրանց մասին
Ինչ որ ասին,
Սուտ է, սուտ.
Էս ապակին
Խաւար աչքին
Ի՞նչ օգուտ»։
Ու կապիկը՝
Ծեր պապիկը
Խոըը վշտով ակնոցները
Էնպէս խփեց չոր քարին,
Որ ջուր կտրած փշրանքները
Կանանչ-կարմիր կապեցին։

Սիրելի՛ հայրիկ

Քո գնալուց յետոյ շատ բան սովորեցի. գիտես հայրիկ ես սովորել եմ սիրուն սիրուն հէքեաթներ ծիծաղելի առակներ, փոքրիկ, լաւ պատմութիւններ: Ես հիմա նկարում եմ խնձոր, տանձ, խաղող, սեղան, աթոռ և էլի շատ բաներ: Ես գրքից արտագրում եմ, կարդում եմ, նամակ էլ եմ գրում. Ես սովորել եմ բաժանութիւն, երգ, որ մէկն ասեմ հայրիկ ջան, ես շատ շատ բաներ գիտեմ:

Միրոյը շատ լաւ է, բայց երբ Սաթիկը. Սիմիկը; դու և մայրիկը միտքէս ընկնում՝ լացս գալիս է: Ե՞րբ պիտի գաս. ինչ տանես, տօներին եկ տար; հա՛ հայրիկ ջան. շուտ գրիր, որ իմանամ: Շատ բարև բոլորին, ասա ամենքին էլ կարօտել եմ: Սաթիկին ու Սիմիկին լաւ լաւ բաներ պիտի պատմեմ:

1910 թ. 2 Մայիսի
Երևան.

Քո որդի Ժրանտ.

26. Բեռի կառապանը

1.

—Էս ինչ անուշ գաթի հոտ է գալիս էդ սայլակից, մըրթմըրթում էր բակում նստած արջ քեռին։

Արջը գնաց, սուսիկ փուսիկ սայլի վրայ բարձրացաւ, համեղ գաթայ որոնեց։ Սայլի ձիերը երբ յանկարծ տեսան մեծ ու անձոռնի արջին՝ խրտնեցին, իջևանի մեծ դարպասից դուրս փախան։

—Քեռին գոռաց. կանգնեցէք. իսկ ձիերը խիստ վախեցան, արջին առան, քարով-քոլով փախցրին։

Սայլը ճօճւեց, վեր վեր թռաւ, արջին կողքից կողք գցեց։

2.

Արջը տեսաւ բանը բուրդ է, քիչ քիչ ուղղւեց, յետին ոտքերին կանգնեց, սանձը բռնեց։

Արջը գոռաց, հարայ տուեց․ իսկ ձիերը շատ կատաղի չափ ընկան, արջին, սայլը թռցրին։

Ճանապարհին մարդիկ տեսան՝ զարմացան, իսկ ձիերը թռցնելով տուն փախան։

3.

Ա՜յ անիծած սայլապան, ինչո՞ւ էդպէս իմ ձիերին չարչարել ես, տըքտըքալով, փընթփընթալով՝ ասաց տատը ու դուրս եկաւ դէպի բակ և ինչ տեսաւ։

—Հողը գլխիս, էս ինչ բան է, էս ինչ արջ է․ ո՞ւր է մեր փուչ սայլապանը, ասաց տատը, վախից մտաւ իր տնակը։

27․ Ջութակահարը

1.

Ջութակահար Կիրակոսը կոնծել, գլուխը տաքացրել էր․ Նա երգելով անտառով գնում էր, մէկ էլ յանկարծ թըրը՜մբ՝ փոսն ընկաւ։

—Օ՜յ, օյ, օյ, կողքս կոտրուեց, կանչեց Կիրակոսը․ ա՜յ դու անպիտան որսորդ, էս ինչ ես շինել։

—Էն ո՞վ է, փսփսաց Կիրակոսը․ էն ո՞վ է, տէր Աստուած։

Նա տեսաւ երկու փայլուն աչքեր և սարսափեց․ գայլ է, հիմա ինձ կտոր կտոր կ՚անէ, մտածեց Կիրակոսը․ վախից թուքը չորացաւ։

2.

Կիրակոսը վեր առաւ ջութակը և ածեց։

Գայլը նայում և հանգիստ լսում էր։



Կիրակոսը քանի գնում, աւելի ու աւելի արագ էր ածում․ գայլը լսում և ոռնում էր։ Մէկ էլ Կիրակոսը վերև նայեց և ինչ տեսաւ․ մի քանի գայլեր փոսի չորս կողմը նստած լսում էին։

—Ես կորայ, ես կորայ, մտածում էր Կիրակոսը։ Յանկարծ ջութակի երկու թելը կտրուեց․ Կիրակոսն ածում հա ածում էր․ մի թելն էլ կտրուեց։

—Ա՜խ, գոնէ էս մի թելը մնար, մտածում էր Կիրակոսը և ածում։ Ջութակի ձայնը որսորդներն իմացան, մօտեցան փոսին և Կիրակոսին ազատեցին։

Հոտաղ Վարդանը

Վարդանի հայրը գլուխն առավ ու գնաց. գնաց հեռու ու օտար աշխարհի, փող աշխատի, տուն պահի:

Փոքրիկ Վարդանը հոտաղ դառավ, որ հաց ճարի. առավոտները շվին փչում, գառների հետ ուրախանում էր. ամեն օր հանդից տուն յետ դառնալիս մորը հարցնում էր.

Ավի, ա՜յ ավի, ապիս չեկա՞վ... Վարդանը հանդում գառների հետ խոսում էր ու ասում.

— Արևս վառվում, կրակվում է, իմ ապիկ գառներ, մուղ, մուղ կերեք, սառը ջուրն անուշ արեք. ականջ դրեք շվիս ձենին. — Ծլը՜ղ լո՜, լո՜, մի լուր տվեք իմ հորից, մի լուր...

---

29. Մոլլի մեղրը

1.

—Ի՞նչ լավ մեղր է, ասաց մոլլան և բերանը ջրով լցուեց։

Նա կանգնեց բախկալի դուքանի առաջ, պարկից հանեց հացը և այնպէս ձևացրեց, թէ մեղրի մէջ է թաթախում։

Այսպէս մեղրին նայելով, մոլլան ախորժակով հացը կերաւ և ուզեց հեռանալ։

—Մոլլա՛, փողը. մոլլա՛, փողը, ասաց բախկալը։

—Ի՞նչ փող, հարցրեց մոլլան։

—Կերածդ մեղրի փողը։

—Չէ որ ես քո մեղրից չկերայ։

—Իսկ եթէ իմ մեղրը չլինէր, կարո՞ղ էիր դու քո հացն էդպէս լաւ, էդպէս ախորժակով ուտել, ասաց բախկալը։

2.

Բանը հասաւ դատի։

Դատաւորը վճռեց, որ մոլլան պէտք է փողը տայ։

Մոլլան երկու մատը իրար քսելով՝ ձևացնում էր, թե փող է տալիս և ասում.

—Ա՛ռ, էս մէկ, էս երկու, երեք...

—Ի՞նչ ես անում, մոլլա, փո՛ղ տուր, ասում է բախկալը:

—Էն տեսակ մեղրին էս տեսակ փողն էլ բաւական է, ասաց մոլլան:

Էն ի՞նչն է
Ոչ ցորեն եմ, ոչ գարի,
Որ հողագործն ինձ ցանի.
Առանց ձեռի հունցած եմ,
Առանց կրակ թխած եմ.
Թոնիր, ջաղաց տեսած չեմ,
Ձեր ամենքի սիրածն եմ:

30. Իժը

1.

Ես քոյրիկիս, մայրիկիս և երկու եղբորս հետ գնացի պարտէզ: Ի՛նչ լաւ է պարտէզը աշնանը: Մենք քաղեցինք տանձեր, խնձորներ, դեղձեր, տեսակ տեսակ խաղողներ: Ուրախ ուրախ երգելով, մենք ցրւեցինք պարտէզում:

Ես նստեցի սև խաղողի վազի մօտ. մէկ էլ մի սառը բան ձեռքիս վրայով սողաց. սարսափած վեր թռայ:

Ա՛խ, Աստուած ջան, ի՛նչ տեսնեմ. մի մեծ սև իժ ուզեց վրաս յարձակւել:

Լեզուս փակւեց. քարացած մնացի. մի ակնթարթ... ես կորած եմ: Մէկ էլ յանկարծ մեր քաջ շունը իժի վրայ յարձակւեց, նրան գզեց, գզգզեց, կտոր կտոր վար թափեց: Իժն էլ նրան շատ կծեց:

2.

Ես շունչ առայ, լացի և օգնութիւն կանչեցի. մայրս հասաւ և զարմացաւ:

Իսկ շո՞ւնը. նա չկար. երկու շաբաթ կորաւ:

Վերջապէս նա երևաց նիհար, բաւական փոխւած:

—Հայրիկն ասաց. նա գնացել մի տեսակ խոտ է գտել, խոտ է կերել, օձի թոյնի դէմ կռւել:

31. Աշուն

Դաշտ ու այգի դեղին հագան,
Ծառ ու ծաղիկ մերկացան,
Թռչունները երամ երամ
Մեր աշխարհից հեռացան:

Օրը մռայլ, ցուրտ ու տխուր,
Բարակ անձրև է մաղում.
Մէգն է պատել սար ու բլուր,
Էլ մարդ չկայ դաշտերում:

Չար ագռաւը ծառի վրից
Ձմռան երգն է կռկռում,
Մարդ, անասուն տուն ու բնից
Ծերուկ հիւրին սպասում:

Անձրև

Կայծակի փայլուն լոյսը մի ակնթար-
թում ամեն բան խաւարից հանեց ու
յետոյ էլի խաւարի մէջ թաղեց:

Քոյրիկ ջան, օգնիր, շորերս փոխենք. Այա-
բոյր, լաւ պրծանք. Մի ականջ դիր. լսո՞ւմ ես
ջրի ձայնը. հիմի ինչ դուրեկան է անձրևի շը-
պըրտոցը. տես, էն փոքրիկ կաթիլներն իրար
գլխի դիպչեցին, ճըզճըզացին. առուներ կապե-
ցին, իրար գրկած՝ գիտես ուր գնացին:



33. Ժամկոչը եւ ուխտաւորը

I

Օրւան մէկը կեռ պոչ շունը
Իր տիրոջից նեղացած՝
Մտքում դրեց տանից փախչել՝
Աղ ու հացը մոռացած:
Բայց արի տես՝ ընկեր գտաւ
Մեր շատախօս աքլորին,
Դրին, վերցրին, խօսք մէկ արին,
Ճամբայ ընկան միասին:

II

Քրտինք մտած աքլոր ու շուն՝
Սար ու ձորեր կտրեցին,
Իրիկնադէմ յոգնած, դադրած՝
Մի վանքի մօտ կանգնեցին:
—Է՜հ, հերիք է, խնամի աքլոր,
Խօսեց շունը բեզարած.

Արի քնենք, որ վաղ զարթենք՝
Լուս ու մութը չբացուած։
Էս խօսքի հետ աքլորն ելաւ,
Թառեց վանքի կտուրին,
Շունն էլ մեկնեց չորս թաթերը
Վանքի դռան մեծ քարին։

III

Ճամբորդները աչքը ծէգին՝
Գիշերն անցրին կիսաքուն,
Լուսադէմին աքլորն ելաւ,
Կանչեց իրա կուկուլիկուն։
Որտեղից որտեղ, էդ չար ժամին
Ձէնը լսեց մի աղուէս,
Հասաւ վանքին ու տեսաւ
Մեր աքլորին սև երես։
—Բարի լոյս քեզ, խնամի աքլոր,
Աղուէսն սկսեց բղաւել.
Խնդրեմ ցած եկ ու դուռը բաց,
Վանքում կուզեմ աղօթել։
—Բարով եկար, քաւոր աղուէս,
Աչքիս վերայ տեղ ունիս.
Գալդ բարի, աքլորն ասեց,
Էս ճրդից ես դու գալիս.
Բայց խնդրում եմ, դռան կշտին
Մեր ժամկոչին տես, ասա,
Որ շտապի ու քեզ համար
Վանքի դռները շուտ բանայ...

IV

Ուխտաւորը ուրախ-ուրախ
Դէպի դուռը շիտկուեց,
Բայց երբ յանկարծ շանը տեսաւ,

Ոտքերը տակը ծալեց։
Մեր Բողարն էլ տեղից թռաւ,
Վրայ հասաւ աղուէսին,
Պոչից բռնեց, բուրդը հանեց,
Սև ուխտ բերեց իր գլխին։
Շունչը կտրած, կաղին տալով,
Աղուէսն հազիւ ազատուած,
Արագ-արագ վազվզելով՝
Ինքն իրան փընթփընթաց.
—Չէ՛, քանի էս վանքն էսպէս ժամկոչ
Իր դռան մօտ կը պահի,
Աստուած վկայ՝ նա իր օրում
Էլ ուխտաւոր չի տեսնի...

---

34. Ոզնին

1.

Զատիկ էր։ Արամն ու Լուսիկը շատ ուրախ էին. հայրիկը նրանց ընծայեց մի գեղեցիկ, պատկերազարդ գիրք. մայրիկը համեղ գաթայ թխեց. մօրաքոյրն էլ կարմիր, դեղին ձուեր ներկեց. իսկ քեռի Պետրոսը մի ոզնի տուեց փոքրիկ ձագերով։

—Տե՛ս, տե՛ս, Լուսիկ, ասաց Արամը. ոզնին գլուխը փշերի միջից դուրս բերեց. տե՛ս, ինչպէս նա իր սուր դնչով մսի և հացի կտորներն ուտում է։ Ա՛յ, էլի կուչ եկաւ, էլի դուրս բերեց։

—Բ՛օ... հիմա էլ իր սուր փշերը ցցեց, գնդակ դարձաւ, ասաց Լուսիկը։

2.

Շուտով ոզնին նրանց սովորեց, իր ձագերի հետ վազում էր յետևներից, նրանց ձեռքից հաց, միս էր առնում, մանուկներին ուրախացնում։

—Ապրի ձեր ոզնին, ասաց մի օր մայրը. մառանի մկներին կերել, ոչնչացրել է։

—Պարտեզի խլուրդներին էլ փախցրել է, ասաց պարտիզպանը. հիմա մեր պարտեզի կարտօֆիլը, Թփերի արմատները էլ չեն փչանայ։

Մանուկները գարուն ու ամառ ոզնու հետ շատ խաղացին, ուրախացան. եկաւ աշունը. մի օր էլ ոզնին իր ձագերի հետ կորաւ։ Երեխաները ամեն տեղ, Թփերի տակ, տերևների

մեջ ման եկան, բայց ոզնին չկար ու չկար։

Մանուկները տխրեցին և լաց եղան։

3.

—Եթէ կը խոստանաք ձեռք չտալ, ես ձեզ տեղը ցոյց կը տամ, ասաց պարտիզպանը։

—Խոստանում ենք, ասացին մանուկները։

—Ահա այստեղ են. նրանք փոս են փորել, խոտ են բերել,

տաք տեղ պատրաստել և քնել են. նրանք ամբողջ ձմեռը պէտք է քնեն, իսկ գարնանը նորից կը զարԹնեն։ Եկաւ գարունը. մանուկները շատ ուրախացան, երբ ոզնին իր ձագերով մօտեցաւ նրանց և հետները խաղաց։

35. Տղան եւ թռչնիկը

—Նաշխուն Թռչնիկ, ո՞ւր ես գնում,
Քո տուն, քո բուն, ո՞ւմ ես Թողնում.
Կաց, ինձ համար երգիր երգեր,
Ապրիր ինձ մօտ ամբողջ ձմեռ։
—Ձեր աշխարհում աշուն, անձրև,
Ծառ ու ճիւղեր առանց տերև,
Չկայ արև, տաք տաք օրեր.
Ի՞նչպէս երգեմ անուշ երգեր։
—Նաշխուն տղայ, սիրուն տղայ,
Ես չեմ մոռնայ իմ տուն, իմ բուն.
Երբ որ կրկին գարունը գայ,
Կը գամ, կ'երգեմ քեզ օրն ի բուն։

36. Ձմեռ

Աշնան վերջին քամին եկաւ՝
Սրբեց դաշտեր, ձոր ու լեռ
Ու ամենքին համբաւ բերաւ,
Թէ գալիս է ցուրտ ձմեռ։
Ու մռայլեց երկինք, գետին,
Մէգը պատեց դաշտ ու սար։

Ցուրտը եկաւ տիրեց երկրին,
Ճերմակ հագաւ մեր աշխարհ։
Մարդ, անասուն ծերուկ հիւրից
Վախվխելով մտան տուն.
Գետն էլ լռեց ցրտի ահից.
Ա՜խ, հեռու է դեռ գարուն...

37. Տողիկը եւ Պեծիկը

Ձմռան տաք իրիկուն էր։ Ձիւն էր գալի ու ձիւնի սպիտակ փաթիլները ընկնում էին մութ գետնի վրայ ու քնում։

Բոլոր փաթիլները ամպերից իջան ու անուշ քնեցին տաք գետնի վրայ, միայն երկու փաթիլ ուշացել էին. նրանք էլ օդի մէջ խաղ անելով, գալիս էին ցած։ Քոյր ու եղբայր էին. քրոջ անունը Տողիկ էր, եղբօրը՝ Պեծիկ։

Օդի մէջ պտտելիս մի պատուհան տեսան, որից պայծառ լոյս էր երեւում։

—Վա՜յ, ի՜նչ լաւ լոյս է, ասաւ Տողիկն ու թ̣ռաւ դէպի լոյսը, գնաց թառեց պատուհանի երկաթի վրայ։

—Վա՜յ, ի՜նչ լաւ լոյս է, ասաւ Պէծիկն ու ինքն էլ մօտեցաւ, որ նստի երկաթի վրայ, բայց ոտքը սահեց, ընկաւ ցած մի թաց քարի վրայ։

—Տողի՜կ, ընկա՜յ, ասաւ Պէծիկը։

—Դէ վեր բարձրացի, ասաւ Տողիկը վերեւից։ Պէծիկը արաւ թէ վեր թռչի՝ չկարողացաւ։

— Ձե՜մ կարող. ասաւ, արի՜ մօտս, Տողի՜կ։

—Հիմի կը գամ, իսկո՜յն, սպասի՜ր տեսնեմ՝ ինչ են անում, պատասխանեց Տողիկն ու նայեց պատուհանից ներս։ Ներսը մի սիրուն տօնածառ կար՝ կանաչ ճիւղքերը վառած մոմերով ու խաղալիքներով զարդարուած։ Մոմերը վառւում, պէծին էին տալի ու փայլուն բոցերը ուրախ ուրախ շարժում դէս ու դէն։ Սենեակը լիքը երեխայ էր։ Ամենքը ուրախ պար բռնած ծառի չորս կողմը պտտւում ու երգում էին. երգելիս էլ երբ զւարթ աչքերը գցում էին ծառից կախած ձիերին, կանֆէտներին, արջերին ու ոսկեզօծ ընկուզներին՝ աւելի էին ուրախանում, ծափ տալի, թռչկոտում։

Տողիկի աչքերը շլացան, երբ նայեց տօնածառին։

—Ի՜նչ լաւ տօնածառ է, մրմնջաց նա։

—Ես էլ եմ ուզում տեսնեմ, ձայն տւաւ Պէծիկը և էլի փորձեց վեր կենայ՝ չկարողացաւ։

—Տողի՜կ, արի։

— Հիմի՜ կը գամ, Պէծի՜կ ջան, հիմի՜։

— Դէ շո՛ւտ, արի։

— Ա՛յ հիմի՜, հիմի, ասում էր Տողիկն ու նայում ներս։

Պէծիկը թաց, մութ քարի վրայ դողում էր ու սպասում քրոջը։

Բայց Շողիկը այնքան տարւել էր տօնածառով, որ էլ մոռացել էր Պէծիկին։ «Ի՜նչ լաւ բան է տօնածառը», մտածում էր նա։

Այդ միջոցին երեխաները երգեցին Նոր տարւայ երգը։ Շողիկն էլ ուզեց նրանց հետ երգի՝ չկարողացաւ. միայն պայծառ շողշողաց ու ծիծաղեց։

—Շողի՛կ, դէ արի, ձայն տւաւ Պէծիկը լացակումած։

Բայց Շողիկը էլ չէր լսում։

Շուտով երեխաներին միրգ բաժանեցին և վերջն էլ վիճակ գցեցին. տօնածառի ձիերը, արջերը, նապաստակը, կանֆէտներն ու ոսկեզօծ ընկուզները տւին երեխաներին։

—Օխա՛յ, օխա՛յ, գոչում էին երեխաները և ուրախ ուրախ ծափ տալի։

Շողիկն էլ ուզում էր ասի՝ «օխա՛յ»՝ չկարողացաւ. միայն ուրախ ժպտաց։

Շուտով տօնածառը վերջացաւ և երեխաները իրենց խաղալիքների հետ ցրւեցին իրենց տները։ Յանկարծ Շողիկը յիշեց Պէծիկին…

—Պէծի՛կ, ձայն տւաւ անհանգիստ։

Բայց Պէծիկը էլ չկար…

Ցած նայեց Շողիկը, տեսաւ, որ Պէծիկը թաց քարի վրայ այնքան լացե՜լ, լացել էր, որ հալւել, կորել էր։

«Վա՛յ» արաւ Շողիկը, ծնկին տւաւ ու տխրեց-մնաց պատուհանի երկաթին մենակ նստած։ Տխրեց, տխրեց, վերջն էլ աչքերից արցունք վազեց ու նա էլ հալւեց, ընկաւ թաց քարի վրայ՝ կորաւ…

Էն ի՞նչն է
Ես եմ մի վերմակ,
Սպիտակ ընդարձակ.
Եւ տաքացնում եմ,
Եւ մրսեցնում,
Դերձակներին չեմ հարստացնում

38. Նոր տարւայ նւէրը

Ծերուկ պապին,
Էն հին տարին,
Գործը պրծած՝
Անցաւ գնաց։
Նրա ետքից
Իջաւ սարից
Էս նոր տարին
Նւէրն ուսին։
—Այ նոր տարի,
Գալդ բարի,
Դու մեզ նւէր
Ի՞նչ ես բերել։
Եարաբ խնձոր,
Չիր ու սալոր,
Թէ՞ տանձ ու նուռ,
Չամիչ մի բուռ…
—Ջան մանուկներ,
Թող ձեզ մրգեր
Մայրիկը տայ.
Ինձ մօտ չկայ։
Ես ձեզ համար
Մի մի համար
Գիրք եմ բերել,
Մէջը պատկեր։
Սրա նման
Ուրիշ մի բան
Էլ չգտայ
Իբրև ընծայ։
Գիրքն է տալի
Մտքեր բարի,
Երգ ցնծութիւն,
Խաղեր սիրուն…

---

39. Դանակը

1.

—Մայրիկ, խանութի լուսամուտում մի գեղեցիկ, փոքրիկ, սպիտակ կոթով դանակ տեսայ. նրա լեզւակները կոկլիկ, փայլուն, սիրուն էին. ա՜խ, եթէ ես մէկն ունենայի…

—Դանակն ի՞նչ պիտի անես, Սուրիկ։



—Դանակով ես շատ բաներ կ՚անեմ, մայրիկ. Նրանով մատիտի ծայր կը հանեմ, սուլիչ կը շինեմ, տանձ, խնձոր կը կպճեմ, քեզ համար կարտօֆիլ

կը մաքրեմ. գիտե՞ս, մայրիկ ջան, նրա գինը շատ թանկ չէ, քսան կոպէկ է։

—Քսան կոպէկ, կրկնեց մայրը և տխրեց։

2.

—Փոքրիկ տղայ, ինձ օգնիր, այս կապոցը հետս բեր, ասաց փողոցում մի օտարական։

—Շատ լաւ, ասաց Սուրիկը և տարաւ։

—Առ այս տասնհինգ կոպէկը քո աշխատանքի համար, ասաց անծանօթը։

—Այդպիսի չնչին ծառայութեան համար տասնհինգ կոպէկ. ոչ, ես չեմ կարող վեր առնել։

—Վեր առ, փոքրիկ, վեր առ, ասաց պարոնը և տուն մտաւ։

Սուրիկը ուրախ տուն վազեց և ամեն ինչ մայրիկին պատմեց։

—Ա՜յ, եթէ ես հինգ կոպէկ էլ ունենամ...

3.

Մի օր էլ սաստիկ ձիւն եկաւ. Սուրիկը իրենց դռան ձիւնը քերեց, մաքրեց։—Իսկ մեր ծեր հարևանի դուռը ով պէտք է մաքրէ, ասաց Սուրիկը և այնտեղ էլ մաքրեց։

—Շնորհակալ եմ, որ ինձ օգնեցիր, ասաց ծերունին. վերցրու այս տասը կոպէկը։

—Սուրիկը շնորհակալ եղաւ, ծափ տալով վազեց բազար. ես հիմա դանակ կ'ունենամ, դանակ, ասում էր նա։

Խանութի առաջ մի փոքրիկ աղջիկ դողդողալով լալիս էր։ Նրա ձեռքից մածնով աման ընկել, կոտրուել էր։

Սուրիկը մէկ նայում էր աղջկան, մէկ նայում էր դանակին. մէկ էլ աղջկայ ձեռքից բռնեց տարաւ մի աման մածուն գնեց։ Աղջիկն ուրախացաւ։ Սուրիկն էլ ուրախ տուն վազեց, մայրիկին պատմեց։

40. Մոլլի ձին

Մոլլան բազարում ձին ծախեց տասներկու թումանի։

—Մոլլա, էդ շատ թանկ է, մի թուման ինձ բաշխիր, ասաց ընկերը։

—Բաշխեցի, ասաց մոլլան։

—Մի թուման էլ ինձ բաշխիր, ասաց միւս ընկերը։

—Թող այդպէս լինի, վրայ բերեց մոլլան։

—Մոլլա, մի թուման էլ ինձ բաշխիր, յայտնեց երրորդ ընկերը։

Մոլլան էլի պակսեցրեց։

—Այսպէս՝ մոլլան ամեն ասողին չէ չէր ասում և միշտ պակսեցնում էր։

—Մոլլա, որ էդպէս անիր, ապա դու ի՞նչ պիտի տանես տուն, հարցրեց կանգնողներից մէկը։

—Ձիս, պատասխանեց մոլլան։

---

41. Կառապան Օհանը

1.

—Էս ի՞նչ շան ձայն է, ասաց կառապան Օհանը իր ընկերոջը. չգնա՞նք տեսնենք, ինչ կայ այնտեղ։

—Բան չունես, պատասխանեց ընկերը. էս ցուրտ ձմռանը, էս մութ գիշերին ի՞նչ կարող է լինել անտառում։

—Կարելի է մէկը մոլորել է և շունը օգնութեան է կանչում, ասաց Օհանը։

—Քո ի՞նչ բանն է։

—Չէ, պէտք է գնալ տեսնել, վրայ բերեց Օհանը։

—Ես չեմ կարող քեզ սպասել, ասաց ընկերը. այժմ վտանգաւոր է, գայլերը կարող են մեզ պատառել։

Օհանը չլսեց և գնաց։

2

Շունը երբ տեսաւ Օհանին, մօտեցաւ նրան և հաչելով առաջնորդեց։

Քիչ յետոյ Օհանը ծառի տակ մի մանուկ տեսաւ. նա քիչ սառած պառկած էր։ Օհանը գրկեց նրան, տարաւ սահնակի մէջ դրեց և տաք շորերով փաթաթեց. կէս գիշերին հասաւ իջևան։

3.

—Անտառում մի տղայ եմ գտել, ասաց նա իջևանի տիրոջը. չէ՞ս կարող տիրոջը գտնել։

—Ո՞րտեղ է, որտեղ, գոռաց մի կին։ Երբ նա տեսաւ իր որդուն, ուրախութիւնից ճըչաց և վայր ընկաւ։

—Դու իմ որդուն ազատեցիր, ասաց ուշքի եկած մայրը. շնորհակալ եմ, շատ շնորհակալ։

---

42. Մկի ընտանիքը

1.

—Մայրիկ, էն ի՞նչ լոյս է, գնամ տեսնեմ, ասաց մուկն իր մօրը։

—Չէ, բալիկս, սպասիր. երբ քոյրերդ մեծանան, նրանց աչքերը բացուեն, այն ժամանակ ես բոլորիդ կը տանեմ։

Մայրը ամեն օր ձագերին կաթ էր տալիս, մառանից պանիր, ծեծած միս, ճարպ էր բերում, կերակրում։ Մի օր էլ մայրն ասաց.

—Ձագուկներս, հիմա դուք մեծ էք, պէտք է դուք ձեզ համար կերակուր ճարէք. ես ձեզ ամեն ինչ ցոյց կը տամ, սուս փուս եկէք իմ յետևից։ Ամենքը գնացին։

2.

—Էս ի՜նչ մութ ճանապարհ է, ասաց մէկը։

—Շատ ոլոր մոլոր և նեղ է, վրայ բերեց միւսը։

—Լո՜յս, լո՜յս, կանչեց երրորդը։



—Այո՛, այստեղ լոյս է, ասաց մայրը. այս մեծ սենեակը խոհանոցն է. այստեղից եմ ձեզ համար ճարպ, միս, շաքար բերում։ Տեսէք, այս ամանի մէջ որչափ լաւ տապակած միս կայ. եկէք, կերէք։ Ձագերը վրայ թափուեցին և կերան։

—Այս շաքարն էլ կրծոտեցէք։

Ձագերը քըռտ քըռտ կրծեցին, բերանները քաղցրացրին։

3.

—Մայրիկ, ի՜նչ լաւ տեղ է. ինչո՞ւ միշտ էստեղ չենք ապրում։

—Չի կարելի, ձագուկներս, չի կարելի. մինչև ճաշ խոհարարը էստեղ կերակուր է պատրաստում։ Էստեղ շուտ շուտ գալիս է մեր թշնամի կատուն. նա մկներին միշտ բռնում է։

Ձեր հօրը էդ կատուն տարաւ։ Խոհանոց մտնելիս շատ զգոյշ եղէք. եթէ կատուն էստեղ լինի, իսկոյն փախէք, հեռացէք։

—Ծը՛ռտ, ճը՛ռտ, ճը՛ռտ, լսեց մի ձայն. մայրը վազեց

և ի՜նչ տեսաւ. մեծ կաթսայի ջրի մէջ ձագերից մէկը խեղդւում էր. մայրը որչափ աշխատեց, չկարողացաւ օգնել:

—Գնանք, ասաց մայրը. ձեր քոյրերից մէկը խեղդւեց, թող այս ձեզ խրատ լինի:

Նրանք իջան ներքնատուն.

4.

—Ծարպի կտոր, ճարպի կտոր, կանչեց մէկը:

—Ո՞րտեղ, ո՞րտեղ, լսւեց ամեն կողմից:

—Ա՜յ, ա՛յ, այն երկաթէ թելերով շինած տան մէջ:

—Կանգնեցէք, կանգնեցէք, ասաց մայրը. դա թակարդ է. դըրանով մկներին բռնում՝ խեղդում են. այստեղ ոչ մի անգամ չմտնէք:

Ձագերը վախից ամեն կողմ փախան:

—Սա ի՞նչ է, ասաց մի մուկ գլուխը կոխելով փարչի մէջ:

—Ո՜ւհ, ինչ մութն է, ներս չգնանք, ասաց միւսը:

—Փախէք, փախէք, կատուն եկաւ, ասաց մայրը. բոլորն էլ անյայտացան:

Բողարը.

Բակի ծայրի սենեակից ձայն է լսւում: Բողարն անհանգիստ վազվզում է նրա չորս կողմը. կանգ է առնում, ականջ դնում, մտածում է ինքն իրեն.

— Իմ տէրս ինչպէս մտաւ, որ չտեսայ. էս ո՞վ կարող է լինել...

Բողարի խելքը բան չի կտրում. ղուռ ու մուռ է գալիս. հաչում հա հաչում է, դուռն է չանկռում, թռչկոտում է պատը դէպի վեր, ուզում է լուսամուտից ներս նայի, բան չի տեսնում:

— Աստուած իմ, էլի ինչ փորձանք է գալու գլխիս. մի ամիս առաջ մեր բակից ինչեր ասես չտարան. սիրուն գառնուկին, կըռկըռան իշուկին, հաւ ու ճուտերին: Մեր տան մեծը, էն սիրելի ծերուկը, որքան բարկացաւ վրաս. ամօթից քիչ էր մնում գետինը մտնէի:

Բողարը հաչում հա հաչում է. դուռն է չանկռում. յանկարծ դուռը բացւեց, դռան միջին երևաց իր տէրը:

Իսկոյն փոխւեց Բողարը. փռւեց գետնին, փորսող տալով մօտեցաւ տիրոջը. նայ-

ում էր արտասուալից աչքերով և ինքն իրեն ասում. —

— Ես մեղք չունիմ:

Անցաւ մի շաբաթ, անցաւ էլի եօթն օր,. Քողարն էս բանը չի մոռանում ու չի մոռանում. տէրոջը պատահելիս փռում է գետնին ու ասում.

— Ես մեղք չունիմ, արդեօք ինչ է իմ սխալը. չեմ հասկանում:

---

44. Իլիկ

Թելիկ-մելիկ
Իմ իլիկ,
Ծէրդ բիզ ու սլուլիկ.
Թմբուլդ կոր
Ու կլոր,
Շալկած թելդ միշտ ոլոր:
Մանում ես դու ճերմակ կազ,
Հանում ես խիստ բարակ մազ.
Մանի, մանոցիդ մատաղ,
Ճարպիկ բանոցիդ մատաղ.
Մանդ մանի, թել արա,
Կոտրած սրտիս լոյս արա:

—

Մանդ մանի,
Թել հանի:
Թելը տանեմ աղին տամ,
Աղէն գթայ,
Սև-փող տայ,

Պարտքատիրոջ հախէն
տամ.
Էն գլխիցն էս գլուխ
Մենք համկալ ենք, իլիկ ջան.
Էս մատներս իմ կակուղ
Քեզ պլտտելուց կոշտացան:
Մանդ մանի՝ քանի կաս,
Իմ դարդերն են անպակաս:

---

45. Դատաւորը

1.

Մի վաճառական փողով քսակը կորցրեց: Նա յայտարարեց.

—Քսակիս մէջ երկու հարիւր մանէթ կայ. գտնողին կէսը կը տամ:

—Ես եմ գտել քո քսակը, ասաց մի խեղճ մարդ. ահա քո քսակը և խոստումիդ համաձայն կէսը տուր:

—Իմ քսակի մէջ մի թանկագին քար էլ կար, ասաց վաճառականը. էն էլ բեր, որ խոստացածս հարիւր մանէթը տամ:

Խեղճ մարդը ինչ կերպ դարձրեց չեղաւ ու չեղաւ: Վաճառականը իրենն էր կրկնում և փողը չտւեց:

2.

Գործը հասաւ դատի:

—Եթէ քո փողի հետ թանկագին քար կար, նշանակում է այս քսակը քոնը չէ, վճռեց դատաւորը. թող այս փողը մնայ գտնողի մօտ, իսկ դու գտիր քո քսակը:

Վաճառականը կարմրեց և առանց խօսելու տւեց իր խոստացած հարիւր մանէթը:

---

46. Շիմօն

1.

—Շիմօ, եկ ինձ մօտ, ասում էր Նազիկը իր կապիկին:

Շիմօն վազում նստում էր փոքրիկ տիրոջ մօտ, նրա հետ խաղում, ուտում, խմում էր և բոլոր ասածները կատարում:



—Շիմօ, տես, տիկնիկիս շորը կեղտոտւել է, ասում էր Նազիկը: Շիմօն տանում, լւանում, չորացնում, հարթուկում և բերում էր:

Ամեն առաւօտ Շիմօն Նազիկի սենեակը մաքրում, փոշին սրբում և ծաղկամանները ջրում էր:

—Շիմօ, գնա նաւթ բեր, ասում էր Նազիկի մայրը:

—Շիմօն բազարից նաւթ էր բերում:

2.



Շիմօն որչափ խելօք էր, այնչափ էլ չար էր. նա մէկ անգամ մայրիկի ակնոցները աչքերին դրած, բազկաթոռի մէջ բազմած գուլպայ էր գործում:

—Մայրիկ, մայրիկ, եկ տես, Շիմօն ի՞նչ է անում, ծիծաղելով կանչում էր Նազիկը. մի տես, ինչպէս լաւ գործում է:

Յանկարծ Շիմօն տեղից վեր կացաւ, մայրիկի շալը գլխին գցեց և նազ ծախելով շրորաց:

—Ա՜յ դու, չարաճճի, ասում էր մայրիկը:

Մէկ մէկ անգամ Շիմօն Նազիկի հետ սեղան էր նստում, անձեռոցիկը վիզն էր կապում, գդալով ապուր էր խմում, դանակով միս էր կտրում, իսկ պատառաքաղով ուտում:

Ձիրով չւամեղ.

Մեծ պասի երկուշաբթին է: Ամանուտէր Ռուկանի տանը մէկը մտնում, տապը դուրս է գալիս. գնում են շնորհաւոր պաս ասելու: Գիւղի տէրտէրը ներս մտաւ թէ չէ՝ բոլորը ոտքի կանգնեցին: Ամէն եկան մեծն ու փոքրը, տէրտէրի աջը համբուրեցին: Ամենից վերջը մօտեցաւ պառիկ հարսը: Յանկարծ լսւեց Ռուկանի ուժեղ ձայնը.

— Հարս ջան, Ոսկեհատ, տէրտէրը հաւարից
մէկ է գալիս մեր տուն, խաչխաւուրդ է. Միջա-
նի չոր չամիչը արա բեր:
— Ինչ չամիչ, չէ որ պաս է, չայն ուրիշ ա
մեն կողմից.
— Հա՛ դէ լաւ. Ոսկեհատս պասւայ չամիչը
նանէ:
Հարսը գնում, ինքն իրեն մտածում է

— Ո՞նց թէ պասւայ չամիչը.. հա, իմացայ:
Իւղ չեմ անի, չէթով կանեմ. ղաւուրեմ
ղաւուրեմ՝ չուն ու չէթը պատրաստեմ:

48. Որբիկը

1.

Շուշան տատը մի թոռնիկ ունէր, անունը Վահան. խեղճը թոռնիկից շուտով զրկւեց, մենակ մնաց և շատ տխրեց:

Մէկ անգամ տատը տանից դուրս եկաւ, տեսաւ մի մանուկ. Նա ոտաբոբիկ էր, շորերը պատառոտւած, մազերը գզգզւած. մանուկը ցրտից դողում էր:

2.

— Ի՞նչ ես ուզում, փոքրիկ մանուկ, հարցրեց տատը: Մանուկը չէր կարող խօսել. Նա ցրտից դողդողում և լալիս էր:

— Խեղճ տղայ. թող սա իմ թոռնիկի տեղ լինի, ասաց տատը և ներս տարաւ:

3

Երբ մանուկը տաքացաւ, կերաւ, խմեց, կշտացաւ, պատաւի հետ շատ խօսեց: Շուշան տատը էս մանուկին շատ սիրեց, իր Վահանի նոր շորերը, կօշիկները հագցրեց: Փոքրիկ մանուկը ուրախացաւ. Նա մէկ տատին էր փաթթւում, մէկ շորերին, կօշիկներին էր նայում. մէկ վազում էր, մէկ կանգնում, էլի նայում, էլի ուրախ վեր վեր թռչկոտում, զւարճանում: Փոքրիկ մանուկը տատի մօտ ապրեց, Շուշան տատին մխիթարեց:

---

49. Որբի պահանջը

Որբ եմ անտուն, անպաշտպան,
Տւէք, խնդրեմ, ապաստան.

Տուէք սնունդ և ուսում,
Ես մարդ դառնալ եմ ուզում։
Չեմ ցանկանում շրջել զուր,
Անգործ ընկնել դռնէ դուռ,
Ջրի մուրալ ու ապրել,
Ողորմութեան սովորել։
Առէք ձեզ մօտ որդեգիր,
Տուէք ձեռքս արհեստ, գիր,
Լինեմ խելօք ու ազնիւ,
Վայելեմ միշտ սէր, պատիւ։

---

50. Նուշիկի վիշտը

1.

—Ի՜նչ վատ պատահեց, ի՜նչ շատ պատահեց. նոր շոր էլ չունեմ, որ հագնեմ, ասում էր Նուշիկը. տանը կապոյտ կտոր էլ չկայ, որ կարկատեմ, այժմ ի՞նչպէս ուսումնարան գնամ։

Նուշիկը գնաց տուն, կտորները քրքրեց, քրքրեց, մի կտոր գտաւ և ուրախ ուրախ սկսեց կարկատել։

—Էդ ի՞նչ ես անում, շո՞րդ ես պատռել, հարցրեց մայրը. կապոյտ կտոր էլ չկայ։

—Մայրիկ, այս մի կտորը գտայ։

—Իսկ ես կարծում էի, թէ կապոյտ կտոր չկայ։

2

Առաւօտեան Նուշիկը լաց լինելով կանչեց.

—Մայրիկ, մայրիկ, ես ի՜նչ վատ բան եմ արել. կապոյտ հագուստս կանաչ կտորով եմ կարկատել. սրանով ի՞նչպէս ուսումնարան գնամ։

—Խեղճ աղջիկս, չէի մտածել, որ ճրագի լոյսի տակ կանաչ կտորը կապոյտ է երևում. բայց ի՞նչ կարող եմ անել.

չոր հացի փող հազիւ եմ վաստակում։ Լաց մի լինիր, կարկատանը գոգնոցով ծածկիր և գնա։

3.

Նուշիկը մօր ասածի պէս արաւ։ Դասերից յետոյ նա ընկերների հետ խաղում էր. յանկարծ նա տեսաւ, որ Վարսիկը իրեն նայում, ծիծաղում է։ Նուշիկն ամաչեց, արտասուքն աչքերին՝ հեռացաւ։

—Տեսա՞ր, ինչպէս նա կարմրեց և լաց եղաւ, ասաց Վարսիկը։

—Տեսայ, տեսայ. ի՜նչ անէ խեղճը, մայրը ւլացարար է, ասաց Արփիկը։

Վարսիկը մտածեց և քիչ յետոյ տուն վազեց. նա վեր առաւ իր տիկնիկի կապոյտ հագուստը, տարաւ Նուշիկին։

---

51. Ղարիպ մշեցին

Ղարիպ ախպէր, արի մեր տուն,
Բուք-բորանին ուր կ'երթաս,
Հերիք այդքան թափառելով,
Սև դարդերդ քամուն տաս։
Անտուն ախպէր, արի մեր տուն,
Էս էլ հայի օջախ է.
Իմ պաղ ջուրս, սև-չոր հացս,
Քեզ պէս ախպօր հալալ է։
Մշակ ախպէր, արի մեր տուն,
Դարդ ու ցաւդ ինձ պատմէ.
Լաց լացի տանք էս մեծ տօնին,
Սիրտս լացի կարօտ է...

Աղքատի տանը ամառն էլ բուք ու բորան է։

52. Մոլլան դատաւոր

1.

—Հինգ հարիւր ղուրուշ պարտք կը տամ էն պայմանով, որ եթէ մի ամսից յետոյ չվճարես, քո ազդրից մի հօխա միս կտրեմ, ասաց հրէան։

—Համաձայն եմ, վրայ բերեց մարդը և հինգհարիւր ղուրուշ պարտք առաւ։

2.

Մի ամսից յետոյ հրէան ուզեց նրա միսը կտրել։ Պարտապանը փախչում է և ազատւելու համար քարով խփում է նրան. քարը դիպչում է մի ուղտի և նրա աչքը փչասում։

Ուղտապանն էլ հրէայի հետ ընկնում է էդ մարդու յետևից և ուզում են բռնել, պատժել։ Մարդը փախչում՝ բարձրանում է գիւղի մինարէթի գլուխը. երբ տեսնում է, որ իրեն պէտք է բռնեն, էդտեղից թռչում է ներքև և ընկնում է մի հիւանդի վրայ։ Հիւանդը փչասւում է։ Հիւանդի տէրն էլ էդ երկուսի հետ ընկնում է նրա յետևից և երեքով հալածում են։

3.

—Սպասեցէք, սպասեցէք, ասում է մոլլան. եթէ ուզում էք, ես ձեր դատը կը կտրեմ՝ միայն էս պայմանով. ով իմ վճիռը չկատարէ հինգ հարիւր ղուրուշ տուգանք տայ։

—Լաւ, ասում են նրանք և սպասում մոլլի դատաստանին։

—Հրէա՛, քո պահանջը ճիշտ է, ասաց մոլլան. առ դանակը և կտրիր էս մարդու ազդրից մի հօխա միս. միայն ոչ մի մսխալ աւել պակաս չպիտի լինի և մէկ էլ արիւն դուրս չգայ։ Եթէ արիւն դուրս գայ, աւել կամ պակաս լինի, էն ժամանակ էս մարդը իրաւունք կ'ունենայ՝ երկու անգամ աւել միս քեզանից կտրէ։

—Դու էլ, ուղտապան, առ էս քարը, խփիր էդ մարդու աջ աչքին՝ միայն էս պայմանով. եթէ քարը ուրիշ տեղ փչասէ, նա կրկնապատիկը քեզ հասցնէ։

Դառնալով հիւանդի տիրոջն՝ ասաց.

—Թող սա պառկի մինարէթի տակ և դու վերևից թռիր, սրան փչասիր. եթէ չկարողացար, կը պատժւես։

Երեքն էլ շւարեցին, իրենց պահանջից յետ կանգնեցին։

Պուտուկը.

„Ծակս ոսկի է„, Մի օր փխած
ծպարտ հպարտ պուտուկն ասաց.
—Շերեփը թէ
Սուս, ամօթ է.
Մի պարծենար գոնէ ինձ մօտ,
Ճաստափորիկ կաւէ անօթ.
Որտեղից եմ գալիս բա ես.
Ծակդ կաւ է, թէկուզ ծակես:

54. Խորամանկ աղվեսը

1.

Քաղցած աղվեսը շատ ման եկավ, որ մի բան գտնի, փորը կշտացնէ, բայց չեղավ ու չեղավ։ Նա տեսավ մի խումբ ագռավներ. խորամանկը փռվեց ձյունի վրա, ոտքերը մեկնեց և սատկած ձևացրեց։

2.

—Զգնանք աղվեսին կտրատենք, նախաճաշ անենք, ասաց մեկը։

—Միթե նա սատկած է, հարցրեց միւսը։
—Զգույշ կացեք, խորամանկը փորձանք կը բերէ։
—Բայց նա չի շարժվում.
—Տես, շունչ էլ չի առնում։
—Իսկապէս, աչքերն էլ անշարժ է։
—Չէ, նա սատկած է, ասաց մի ագռավ և վրա հասավ, պոչը պինդ կտցեց ու յետ յետ փախավ։

Աղվեսն անշարժ պառկած էր գետնին։

—Նա սատկած է, ասաց ուրիշը և վրա հասավ, որ աչքը հանէ, համով նախաճաշ անէ։

Բայց խորամանկը հափ արավ՝ բռնեց։



55. Ճպուռն ու մրջյունը

Թռիվ-վռիվ մի ճպուռ
Ողջ ամառը շուռ ու մուռ
Երգեց, ճռաց,
Ծռճռաց։
Մին էլ, ընը՛, ձմեռը
Փռեց իրա թևերը,
Բացեց գորգը սպիտակ,
Դաշտերն առավ ձյունի տակ։
Եկան օրեր ցրտաշունչ,
Ճպուռն ընկավ լուռ ու մունջ.
Քաղցած փորին էլ ի՞նչ երգ,
Ցուրտը տարավ ոտ ու ձեռք.
Զընգըր-զընգըր դողալով,
Ծանր ծանր սողալով,
Նա մրջյունին ասում էր.
«Գլխիդ մատաղ, սանամէր,
Մի ճար արա՝ շունչ առնեմ,
Ցրտից, սովից չմեռնեմ.
Կերակրրի, տաքացուր,
Մինչև գարուն ապրեցուր։

—Ի՞նչ խաբար է, իմ սանիկ,
Զարմանում եմ, ա ջանիկ.
Զաշխատեցի՞ր ամառը.
Ասա, ի՞նչ էր պատճառը։
—Էդպէս բանի, սանամէր,
Էլ ով ժամանակ ունէր։
Էն խոտերում բուրաւէտ
Երգում էինք մերոնց հետ։
«Ուրեմն դու՛»...
—Այո, ես,
Ողջ ամառը դէն ու դէս,
Երգ երգեցի մշտապէս։
—Երգեցիր, հա՞. շատ բարի.
Այժմ էլ բռնի վերվերի,
Քամին ծափ տայ՝ դու պարի։

---

56. Մատանու մատը

1



Մէկ անգամ մատանու մատը մի շատ թանկագին մատանի դրեց։ Մատանին փայլում էր արևի նման, պէծ պէծին էր տալիս կարմիր ու կանաչ, դեղին ու կապոյտ գոյներով։ Մարդիկ հաւանում էին և ամեն մէկը գովելով խօսում։

2

Մատանու մատը մտածում էր, թէ ինքը բոլոր մատերից սիրունը և լաւն է. նա մեծամտեց։ Մի օր էլ միւս մատերին ասաց.

—Երանի իմանամ՝ դուք ինչու համար էք իմ մօտս շարւած. ի՞նչ բանի պէտք էք. տեսէք, ես ինչպէս փայլում եմ, մարդիկ ինձ են նայում, միշտ գովում։

3.



—Եթէ այդպէս է, հպարտ քոյրիկ, էլ մենք քեզ ընկեր չենք լինի. գնա ապրիր, ինչպէս ուզում ես, ասաց բութը։

Բոլոր մատերը համաձայնեցին։ Երկու օր յետոյ մատանու մատը մի շատ գեղեցիկ վարդ տեսաւ և ուզեց քաղել։

Ոչ մի մատ նրան չօգնեց։ Որչափ աշխատեց, չարչարւեց, չկարողացաւ վարդը քաղել։

—Մենք քեզ չենք օգնի, ասաց մեծ մատը։

Մի երկու օր էլ դրա վրայ անցաւ. մատանու մատը ուզեց բալ քաղել։ Միւս մատերը էլի չօգնեցին. դէս ու դէն ընկաւ, շատ շատ չարչարւեց, չկարողացաւ բալ քաղել։

– Մենք քեզ չենք օգնի, ասաց ցուցամատը։

Մի օր էլ մատանու մատը իր տիկնիկին ուզեց զարդարել, որ հետը խաղայ. որչափ չարչարւեց, չկարողացաւ։

Մատանու մատն այժմ հասկացաւ, որ ինքը մենակ բանի պէտք չէ։ Նա դիմեց միւս մատերին, որ իրեն օգնեն։

—Մենք քեզ չենք օգնի, ասացին բոլոր մատերը միասին։

Մատանու մատը մոլորւեց. նա գլուխը կախեց, մտածեց և հասկացաւ իր սխալը. նա նորից դիմեց ընկերներին, որ իրեն ներեն, առաջւայ նման ընկեր լինեն։

Մատերը ներեցին։ Այն օրից դէսը ձեռքի մատերը սիրով մնացին և միշտ մէկ մէկու օգնեցին։

Մի ձեռքը ծափ չի տայ։ Ես աղա, դու աղա, մեր աղունը ո՞վ աղայ։

57. Դարբին

Կռանը ձեռքին, զնդանն առաջին,
Բիթ երեսն մրոտ դարբնոցի միջին,
Կաշվե գոգնոցը առաջը կապած՝
Լռիկ կանգնած է մեր Խաչո դարբին։

Փուքսը փո՛ւհ հա փո՛ւհ փչում է, փչում,
Կայծեր ու մոխիր դես ու դեն սփռում։
Երկաթի մի շերտ հնոցը կոխած՝
Սաստիկ տաքից կարմրում է, կակղում։

Խաչոն հանում է երկաթի շերտը,
Զնդանի վրայ կռանում, ծեծում,
Շինում նրանից պայտ, մեխ ու կացին
Եւ իսկոյն ջրի տաշտակը կոխում։

Թշշում է երկաթը ցուրտ ջրի միջին,
Ամպի պես փռում տաք տաք գոլորշին·
Նրկին պնդանում, կրկին փափկանում,
Մինչև որ պատրաստ շպրտում գետին։

Այսպես ամբողջ օր մեր դարբին Խաչոն,
Կրակի առաջ, այն կեղտ ու մուրում,
Մի կտոր չոր հաց ճարելու համար,
Կուչ-ձիգ անելով՝ իր կեանքն է մաշում։

---

58. Գուրգենի փորձը

—Տղերք, աղջկերք, լսեք, ասաց Գուրգենը· հետս բերել եմ մեր լամպի ապակին և մետաքսէ թաշկինակ· վարժապետը էն օրն ինչ փորձ արաւ, ես էլ պիտի անեմ։

—Ա՛յ, թղթի մանր կտորներ, մազ, բարակ չոփեր· լաւ նայեք· տեսէք մետաքսէ թաշկինակով տրորում եմ լամպի ապակին· ա՛յ, ա՛յ, մօտեցնում եմ թղթի կտորներին· տեսէք, ոնց են կպել ապակուն թուղթ, մազ, չոփ... Նայեցեք, հիմի էլ էս սաթն եմ քսում շալի կտորին։ Սաթն էլ ապակու նման պար է ածում թղթի մանր կտորները, մազը, չոփը։

—Հռիփսիկ, Սիրանուշ, լուսամուտների փեղկերը ծածկեցէք։

—Դէ· միւսներդ էլ իմ չորս կողմը· ա՛յ, ա՛յ, այդպես· դէ, վերջին փեղկն էլ ծածկեցէք· հիմի բոլորովին մութն է։

Լաւ ուշք դարձրէք· առաջվայ նման ապակին տրորում եմ. մօտեցնում եմ մատիս· ի՞նչ երևաց։

—Փոքրիկ կայծ, բաց կապոյտ լոյս, գոռացին ամեն կողմից։

—Տուռ եմ գալիս էն միւս կողմի վրայ, մէկ էլ եմ անում. էս անգամ էլ լաւ յաջողւեց։ Փեղկերից մէկը մի քիչ բացեք· Արշակ, եկ ինձ մօտ։

—Երրորդ անգամ եմ փորձը անում· փեղկը բոլորովին ծածկեցէք· ապակին տրորում, մօտեցնում եմ Արշակի մատին։

—Էլի կայծ, էլի լոյս, ձայն տւին ամեն կողմից։

—Էս ի՞նչ էր, կարծես մատս ասեղով ծակեցին, գոռաց Արշակը։

—Ոչինչ, քո մատին փոքրիկ կայծակը խփեց, վրայ բերաւ Գուրգէնը...

—Հա՛, հա՛, կարգին կայծակ է, մենակ անձրևն է պակաս, անձրևը, մի ծայրից բղաւեց Բաբկէնը։

Ուսուցիչը ներս մտաւ· զարմացած կանգնեց դռան առաջ· լուսամուտի փեղկերը բացւեցին· ամեն մէկն իր տեղն շտապեց· այդ թեթև իրարանցման ժամանակ Գուրգէնի ապակին ձեռքից վայր ընկաւ, կոտրւեց։

Դասարանում տիրեց լռութիւն։

—Էս ի՞նչ է պատահել ձեր դասարանում, ի՞նչ էիք անում մութ տեղը, հարցրեց ուսուցիչը։

Գուրգէնը մէկ մէկ պատմեց։

Ուսուցչի տխուր դէմքը կամաց կամաց բացուեց. երեսին ժպիտ եկաւ։

—Փոքրիկներ, հապա ի՞նչ կ՚անէք, որ Գուրգէնի ապակին ջարդուել է։

—Մենք, մենք պիտի առնենք լամպի ապակին, ասաւ Արշակը։

—Այո՛, այո՛, մենք պիտի առնենք, մենք, կամաց ձայնուեց ամբողջ դասարանը։

Սորեկ եղաւ, ոչխարն եկաւ,
Աւլիկ բալէս քնած մնաց.
Վեր ել, բալայ, անուշ եղա՛.

Սրտիկ արա, ծիծիկ մամա՛,
Ծիծիկ-միծիկ տոտիկ արա.
Ժողպա, բալիկ, քունդ անուշ.
Շաքար ու նուշ, թուղթ անուշ:

60. Գիւղի հեռախօսը

Աւագ ապին կանգնած է իրենց կալումն, իսկ Տիգրանը գիւղամիջումն և միմեանց հետ խօսում են գեղական հեռախօսով։ Տիգրանը մի ձեռքն ականջին դրած, միւսով փափախը բռնած՝ ցած ու բարձր է անում և բարձրաձայն կանչում է Աւագ ապնին։ Իսկ սա՝ աջ ձեռքով ձեռնափայտը գետնին յենած, ձախը տարել է ականջի քամակը հաւաքել և լսում է.

—Ա՜պի, ա՛պի, Աւագ ապի՛, Ա՜ւագ ապի՛,	—Մերոնց իշին երէկ գիշե՛ր, Երէկ գիշե՛ր
Աստուած սիրես, է՛շը կապի՛, Է՜շը կապի՛...	Գազանները փա՛րն են քշե՛լ։ Փա՛րն են քշե՛լ...
—Աղա՛ Տիգրան, Տիգրան, Տիգրան, Էհէ՛յ Տիգրա՛ն,	—Ա՜յ հա՛խն ա՛, ա՛յ տեղն ա՛, Թա՛մամ տեղն ա՛,
Իշին ի՞նչ կայ, ի՞նչ կայ նրա՛ն... Ի՞նչ կայ նրա՛ն...	Գիքոր բիձու խստակ մեղն ա՛, Հա՛լալ մեղն ա՛...

---

61. Տէրն ու ծառան

Աստուած բարի տայ ձեզ էլ, երկու ախպօրն էլ։ Լինում են չեն լինում, երկու աղքատ ախպէր են լինում։ Մտածում են ինչ անեն, ոնց անեն, որ իրենց տունը պահեն։ Վճռում են՝ փոքրը տանը մնայ, մեծը գնայ մի ունևորի ծառայ մտնի, ռոճիկ ստանայ, ղրկի տուն։

Էսպէս էլ մեծը վեր է կենում, գնում մի հարուստի մօտ ծառայ մտնում։

Ժամանակ նշանակում են մինչև մին էլ գարնան կըկըւի ձէն ածելը։ Էս հարուստը մի չլսած պայման է դնում ծառային։ Ասում է՝ «մինչև էն ժամանակը թէ դու բարկանաս՝ դու հազար մանէթի տուգանք տաս ինձ, թէ ես բարկանամ՝ ես տամ։»

—Ես որ հազար մանէթ չունեմ՝ որտեղից տամ, ասում է ծառան։

—Բան չկայ, փոխարէնը ինձ տասը տարի ձրի կը ծառայես։

Տղէն մին վախենում է էս տարօրինակ պայմանից, մին էլ մտածում է, թէ ինչ պէտք է պատահի։ Ինչ ուզում են անեն, ես եմ ու չեմ բարկանալ, պրծանք գնաց։ Իսկ թէ իրենք կը բարկանան, թող իրենք էլ տուժեն իրենց դրած պայմանով։

Ասում է լաւ. համաձայնում է։ Պայմանը կապում են ու մտնում է ծառայութեան։

Միւս օրը վաղ տէրը վեր է կացնում ծառային, ղրկում է արտը հնձելու։

—Գնա, ասում է, քանի լուս է՝ հնձի, որ մութն ընկնի, կը գաս։

Ծառան գնում է, ամբողջ օրը հնձում, իրիկունը յոգնած գալիս է տուն։ Տէրը հարցնում է.

—Էդ ո՞ւր եկար։

—Դէ արևը մէր մտաւ, ես էլ եկայ։

—Չէ, էդպէս չի։ Ես քեզ ասել եմ՝ քանի լուս է՝ պէտք է հնձես։ Արևը մէր մտաւ, բայց տես, նրա տեղը լուսնեակը դուրս եկաւ։ Սա ինչ պակաս է լուս տալի...

—Էդ ո՞նց կը լինի... զարմանում է ծառան։

—Հ՞ը, դու արդէն բարկանո՞ւմ ես, հարցնում է տէրը։

Չէ, չեմ բարկանում... ես միայն ասում էի՝ յոգնած եմ... Մի քիչ հանգստանամ... կըզկըզում է վախեցած ծառան ու գնում է նորից հնձելու։

Հնձում է, հնձում, մինչև լուսնեակը մէր է մտնում։ Բայց լուսնեակը մէր է մտնում թէ չէ, դարձեալ արեգակն է դուրս գալի։ Ծառան ուժասպառ արտում վէր է ընկնում։

—Վա՜յ, քու արտն էլ հարամ ըլի, քու հացն էլ, քու տւած ռոճիկն էլ... սկսում է հայհոյել յուսահատւած։

—Հ՞ը, դու բարկանո՞ւմ ես, կանգնում է գլխին հարուստը։ Երբոր բարկանում ես, մեր պայմանը պայման է։ Էլ չասես թէ քեզ հետ առանց իրաւունքի վարւեցին։

Ու պայմանի ուժով ստիպում է, ծառան կամ հազար մանէթ տուգանք տայ, կամ տասը տարի ձրի ծառայի։

Ծառան մնում է կրակի մէջ։ Հազար մանէթ չունէր, թէ տար հոգին ազատ անէր. տասը տարի էլ էս տեսակ մարդու ծառայելը անկարելի բան էր։ Միտք է անում միտք, վերջը հազար մանէթի պարտամուրհակ է տալի հարուստին, դառն ու դատարկ վերադառնում տուն։

Հ՛ը, ի՞նչ արիր, հարցնում է փոքր ախպէրը։ Ու մեծ ախպէրը նստում է, գլուխն եկածը պատմում, ինչպէս որ պատահել էր։

—Բան չկայ, ասում է փոքրը, դարդ մի անի. դու տանը կաց, հիմի էլ ես գնամ։

Վեր է կենում, հիմի էլ փոքր ախպէրն է գնում, ծառայ մտնում էլ նոյն հարուստի մօտ։

Հարուստը դարձեալ ժամանակը որոշում է մինչև կկւի ձէն ածելը ու պայման է դնում, որ եթէ ծառան բարկանայ, հազար մանէթ տուգանք տայ կամ տասը տարի ձրի ծառայի, թէ ինքը բարկանայ, հազար մանէթ տայ ու էն օրից էլ ծառան ազատ է։

—Չէ, էդ քիչ է, հակառակում է տղէն։ Թէ դու բարկանաս, դու ինձ երկու հազար մանէթ տաս. թէ ես բարկանամ, ես քեզ երկու հազար մանէթ տամ կամ քսան տարի ձրի ծառայեմ։

—Լաւ, ուրախանում է հարուստը։ Պայմանը կապում են, ու այժմ էլ փոքր ախպէրն է մտնում ծառայութեան։

Առաւօտը լուսանում է, էս ծառան վեր չի կենում տեղիցը։ Տէրը դուրս է գնում, տուն է գալի, էս ծառան դեռ քնած է։

—Ա՛յ տղայ, դէ վեր կաց է, օրը ճաշ դառաւ։

Հ՞ը, բարկանո՞ւմ ես դու… գլուխը վեր է քաշում ծառան։

—Չէ, չեմ բարկանում, վախեցած պատասխանում է տէրը. միայն ասում եմ՝ պէտք է արտը գնանք հնձելու։

—Հա, որ էդ ես ասում ոչինչ, կը գնանք, ինչ ես վռազում։

Վերջապէս ծառան վեր է կենում, սկսում է տրեխները հագնել։ Տէրը դուրս է գնում, ներս է գալի, սա դեռ տրեխները հագնում է։

—Այ տղայ, դէ շուտ արա, հագի է…

—Հ՞ը, հօ չէ՞ս բարկանում։

—Չէ, ո՞վ է բարկանում, ես միայն ուզում էի ասել՝ ուշանում ենք…

—Հա՛, էդ ուրիշ բան է, թէ չէ պայմանը պայման է։

Մինչև ծառան տրեխները հագնում է, մինչև արտն են գնում, ճաշ է դառնում։

—Էլ ինչ հնձելու ժամանակ է, ասում է ծառան. տեսնում ես՝ ամենքն էլ ճաշում են. մենք էլ մեր ճաշն ուտենք՝ յետոյ։

Նստում են, ճաշն ուտում։ Ճաշից յետոյ էլ ասում է՝ «մշակ մարդիկ ենք, պէտք է մի քիչ քնենք հանգստանանք՝ թէ չէ՞»։ Գլուխը կոխում է խոտերի մէջն ու քնում մինչև իրիկուն։

—Տօ, վեր կաց է, մթնեց է, ուրիշները հնձեցին, մեր արտը մնաց… Վա՛յ քու դէսը ղրկողի վիզը կոտրի, վա՛յ քու կերածն էլ հարամ ըլի, քու արածն էլ… Էս ինչ կրակի մէջ ընկայ… սկսում է գոռգոռալ յուսահատուած տէրը։

—Հ՞ը, չլինի՞ թէ բարկանում ես, գլուխը վեր է քաշում ծառան։

—Չէ, ո՞վ է բարկանում, ես էն էի ասում թէ՝ մթնել է, տուն գնալու ժամանակն է։

—Հա՛, էդ ուրիշ բան է, գնանք, թէ չէ հօ մեր պայմանը գիտես. վա՛յ նրա մեղքը, ով բարկացաւ։

Գալիս են տուն։ Տեսնում են հիւր է եկել։

Ծառային ղրկում է թէ՝ գնա ոչխար մորթի։

—Ո՞րը։

—Որը կը պատահի։

Ծառան գնում է։ Մի քիչ յետոյ լուր են բերում հարուստին, թէ հասի, որ քու ծառան ամբողջ հօտդ կոտորեց։ Էս հարուստը վազում է, տեսնում է՝ ճիշտ որ, ինչ ոչխար ունի, բոլորը ծառան մորթել է։ Գլխին տալիս է, գոռում.

—Էս ի՞նչ ես արել, ա՛յ անաստուած. քու տունը քանդուի, ինչ իմ տունը քանդեցիր…

—Դու ասիր՝ «որ ոչխարը պատահի՝ մորթի». ես էլ եկայ, բոլորը պատահեցին, բոլորը մորթոտեցի. ուրիշ աւել պակաս ի՞նչ եմ արել, հանգիստ պատասխանում է ծառան. բայց կարծեմ դու բարկանում ես…

—Չէ, բարկանում չեմ, միայն ափսոս գալիս է, որ էսքան ապրանքս փչացաւ…

—Լա՛ւ, որ բարկանում չես, էլ կը ծառայեմ։

Հարուստը մտածում է՝ ինչ անի, ոնց անի, որ էս ծառայիցն ազատուի։ Պայման է կապել մինչև մին էլ գարնան կըկուի ձէն ածելը, այն ինչ դեռ նոր են մտել ձմեռը, դեռ ո՞րտեղ են գարունն ու կըկուն…

Միտք է անում միտք, մի հնար է մտածում։ Կնոջը տանում է անտառում մի ծառի վեր հանում ու պատուիրում, որ «կուկու» կանչի։ Ինքը գալիս է ծառային տանում թէ՝ արի գնանք անտառը որսի։ Հէնց անտառն են մտնում թէ չէ, կինը ծառի վրայից կանչում է—«կուկո՛ւ, կուկո՛ւ»…

—Ըհ՜ը, աչքդ լուս, ասում է ծառային տէրը. կըկուն կանչեց, ժամանակդ լրացաւ…։

Տղէն գլխի է ընկնում տիրոջ խորամանկութիւնը։

—Չէ, ասում է, ով է լսել որ տարու էս եղանակին, ձմեռուայ կիսին, կըկուն ձէն ածի, որ սա ձէն է ածում։ Ես պէտք է էս կըկուին սպանեմ, սա ինչ կըկու է…

Ասում է ու հրացանը քաշում դէպի ծառը։

Տէրը գոռալով ընկնում է առաջը.

—Վա՜յ, չգարկես, Աստծու սիրուն.. սև լինի քո պատահելու օրը, էս ինչ փորձանք էր, որ ես ընկայ մէջը...

—Հ՞ը, չըլինի՞ թէ բարկանում ես...

—Հա՛, ախպէր, հերիք էր. արի՝ ինչ տուգանք տալու եմ տամ, քեզանից ազատվեմ։ Իմ դրած պայմանն է՝ ես էլ պէտք է տուժեմ։ Հիմի նոր եմ հասկանում էն հին խօսքը՝ թէ «մարդ ինչ անի, իրեն կանի»։

Էսպէս հարուստը խելօքանում է, իսկ փոքր ախպէրը մեծ ախպօր տւած պարտքի թուղթը պատռում է, հազար մանէթ տուգանքն էլ առնում ու վերադառնում տուն։

---

62. Գարուն է...

Զարաճրճի մանուկի պէս
Արևն է միշտ ժպտերես,
Սարն ու դաշտը կանաչազարդ՝
Բացւել է և կարմիր վարդ։

Սիրուն է...

Նախշուն ծտեր հազար ու բիւր
Չորս կողմից են եկել հիւր,
Թիթեռնիկներ, ճանճ ու բզէզ
Թռչկոտում են ուր կուզես։

Ջա՜ն, ջա՜ն, ջա՜ն...

Պարտէզների բոլոր ծառեր
Ծաղիկներ են բաց արել,
Շուտով կը գայ կարմիր ամառ՝
Միրգ կը բերի մեզ համար։

---

63. Գարնան հրաւէրը

1.

—Ծառեր, ծաղիկներ, խոտեր ու բոյսեր, բաւական է որչափ քնեցիք, ասաց արեգակը. գարուն է, օրերը տաք են, շուտով արթնացէք, երկիրը զարդարէք:

—Բարև՜ քեզ, բարև, սիրելի գարուն, ասացին խոտերը և կանաչեցին:

—Մենք շատ ուրախ ենք, աննման գարուն, կանչեցին ծառերը, տերևներ արձակեցին:

—Մենք էլ ուրախ ենք, սիրուն գարուն. մեր պտուկները հագիւ տաքացան. շուտով կը ծաղկենք և քեզ կը գովենք, ամեն կողմից ձայնեցին պտղատու ծառերն ու ծաղիկները:

—Տ՜ըզ, տ՜ըզ, տ՜ըզ, ասացին մեղուները. շնորհակալ ենք, նաշխուն գարուն: Հազիւ ազատուեցինք ծանր ձմեռից. ամբողջ ձմեռը թմրած մնացինք:

2.

Մեղուները խումբ խումբ թռան, գնացին խնձորենու մօտ, էսպէս ասացին.

—Կարմրածաղիկ խնձորենի,
Ողջ ձմեռը քաղցած ենք.
Ուժից հալից ընկած ենք.
Ծաղիկներդ բաց արա,
Մեզ բոլորիս տեղ արա:
Մենք ուզում ենք քո հիւթից
Ծծենք, ուտենք, կշտանանք,
Ուրախ, զւարթ տուն դառնանք:



—Ափսո՜ս, շատ ափսոս, ծաղիկներս դուրս չեն եկել, թէ չէ՝ ձեզ պէս հիւրերին ես շատ սիրով կ'ընդունէի:

Գնացէք բալենու մօտ, նա շուտ է ծաղկում:

Մեղուները թռան, գնացին բալենու մօտ և ասացին.

—Սիպտակ ծաղիկ բալենի,
Ողջ ձմեռը քաղցած ենք,
Ուժից, հալից ընկած ենք.
Ծաղիկներդ բաց արա,
Մեզ բոլորիս տեղ արա:
Մենք ուզում ենք քո հիւթից
Խմենք, ծծենք կշտանանք,
Ուրախ, զւարթ տուն դառնանք:

—Բարո՜վ եկաք, ժիր մեղուներ, հազար բարով սիրուններ, ասաց բալենին. վաղը եկէք, ծաղիկներս բաց կը լինին:

3.

Մեղուները տխրեցին:

—Մեր ծաղիկները ձեզ համար պատրաստ են, ասացին մանուշակները թփերի միջից:

Մեղուները ուրախ ուրախ վրայ թափուեցին, նրանց հիւթը ծծեցին, կշտացան, տըզտըզալով փեթակ վերադարձան:

64. Մանուշակ

Կապույտ գլխով, կանաչ ոտով,
Ես ծաղիկ եմ անուշ հոտով.
Թեև տունկս փոքրիկ է, ցած,
Արոտներում միշտ թաք կացած,
Բայց իմ փունջը ամենի տան,
Թե աղքատի, թե մեծատան,
Իբրև գարնան առաջին զարդ,
Տեսնում է միշտ ամեն մի մարդ։
Ես եմ սիրուն գարնան գուշակ,
Իմ անունն է մանուշակ

---

65. Ձիւն եւ ձնծաղիկ

1.

—Մենք կանաչ ենք, սիրելի ենք, ասացին խոտերը.

—Մենք կանաչ ենք, ղուրեկան ենք, յայտնեցին տերևները։



—Մենք էլ կանաչ ենք, մենք էլ ձեզ հետ ընկեր ենք, կանչեցին թփերն ու հացաբույսերը։

—Իսկ մենք սիրուն, պէս պէս գոյներ շատ ունենք, ասացին ծաղիկները։ Մեզ սիրում են մարդիկ, մեզ սիրում են թռչունները, մեզ սիրում են միջատները։ Մեզ մօտ ամենքը հիւր են գալիս, մեզ պահում են, խնամում են, մեզնից անուշ հոտ են առնում։

2.

—Ես ի՞նչ անեմ, որ գոյն չունիմ, դողդողալով ասաց ձիւնը։ Նա կուչ եկաւ, մանրիկ փոքրիկ հատիկներով՝ սուսիկ փուսիկ գնաց հասաւ կանաչներին ու ասաց.

—Սիրուն կանաչներ, ձեր գոյնիցն ինձ էլ տուէք. ես գոյն չունիմ, ես անգոյն եմ. տուէք մի քիչ ձեր գոյնիցը. ես ուզում եմ գոյն ունենալ, կանաչ լինել, որ ձեզ նման ուրախ լինիմ։

—Գնա՛ կորի՛ր, ցուրտ ու սառոյց. քո սառը հատիկներին մենք անկարող ենք մեր գոյնից տալ, քեզ ընկեր լինել։

3.

Ձիւնը սուս արաւ, նորից կուչ եկաւ և սուսիկ փուսիկ գնաց վարդի մօտ և էսպէս ասաց.

—Սիրուն ալ վարդ, կարմիր վարդ. ի՞նչ կը լինի՝ քո գոյնիցն ինձ էլ տաս. ես գոյն չունիմ, ես անգոյն եմ. տուր ինձ մի քիչ քո գոյնիցը, ես ուզում եմ գոյն ունենալ, կարմիր լինել, որ քեզ նման ուրախ լինիմ։

—Գնա, հեռացիր, տխուր սառը ձիւն, ես անկարող եմ իմ գոյնիցը տալ, քեզ ընկեր լինել։

Ձիւնը սուս կացաւ, նորից կուչ եկաւ և սուսիկ փուսիկ գնաց շուշանին և էսպէս ասաց.

—Սիրուն շուշան, սիպտակ ծաղիկ, ի՞նչ կը լինի՝ քո գոյնից ինձ էլ տաս, ես գոյն չունիմ, ես անգոյն եմ՝ տուր ինձ մի

քէչ քո գոյնից, ես ուզում եմ գոյն ունենալ, սիպտակ լինել, որ քեզ նման ուրախ լինեմ։

– Գնա՛, հեռացիր, Չրիկ սառած ձիւն, ես անկարող եմ իմ գոյնից տալ, քեզ ընկեր լինել։

4.

Ձիւնը սուս կացաւ, էլի կուչ եկաւ, էլի դողդողաց և սուսիկ փուսիկ շատ տեսակ ծաղկների մօտ գնաց։

Ամեն ծաղիկ էլ նրան մերժեց, իր գոյնից բաժին չտուեց։

Ձիւնը մոլորւեց... տխուր ու տրտում մի կողմ քաշւեց, նա բարկացաւ և լաց եղաւ։

—Ինչու ես լալիս, փափլիկ ձիւնիկ. ինչու էք տխուր, սիրուն հատիկներ, հարցրեց մի ծաղիկ։

—Ի՛նչպէս չլամ, ի՛նչպէս չտխրեմ, ասաց ձիւնը բարկացած. շատ խոտերի, կանաչների, ծառերի աղաչեցի, շատ ծաղիկների մօտ գնացի, նրանց գոյնից խնդրեցի, ոչոք չուզեց ինձ մի գոյն տալ. ես անգոյն եմ, ես մենակ եմ, ընկեր չունիմ, ի՛նչպէս ապրեմ։

—Եթէ իմ պարզ, շատ հասարակ սպիտակ գոյնը քեզ դուր կը գայ, ես քեզ կը տամ իմ գոյնը, ասաց ծաղիկը։

Ձիւնը լսեց, ուրախացաւ, նա մեծ սիրով այդ գոյնն առաւ, սիպտակ դարձաւ։

5.

Ձիւնն ու ծաղիկ ընկերացան, սիրով կապւեցին. ծաղիկն իր անունը դրեց ձնծաղիկ. ամեն տարի գարնան գլխին ձիւնի հետ է դուրս գալիս։ Ձիւնն էլ նրան տաք է պահում, բարև տալիս, համբուրում։

Ամեն տարի գարնան գլխին ուրիշ ծաղիկ չի երևում դաշտումը. ձիւնը նրանց խիստ պատժում է, սառեցնում թողնում է։

Ամեն տարի գարնան գլխին ձնծաղիկն է միշտ փայլում։

Ամեն տարի գարնան գլխին մարդիկ նրան են ողջունում։

Քամի.

Նուշիկն ու Երանեակը լռիկ-մնջիկ գրում նկարում էին սենեակում: Յանկարծ այնտեղ ներս ընկաւ իրենց ծանօթ Ծրաչը:

—Երանեակ, տես ով հիւր եկաւ, ուու՜, ուուու՜...

„Ա՜, բարո՜վ Ծրաչ, ինչո՞ւ ես այդպէս գունատել, ինչո՞ւ ես այդպէս դողում ու հեւում, ի՞նչ կայ":

—Քամու ձեռքից եմ փախել. հազիւ հազ պրծայ, մարդ է թռցնում, չէ՞ք լսում...

Բո՜ւ ո՜ւ, վո՜ւ ո՜ւ...

Կնցւեցին սենեակի դռներն ու լուսամուտները:

—Ծոգեակ Նուշիկ, էս քամուն ի՞նչ իղոտ սիրտ ունիս, նստել նկարում ես:

Անցյալ տարի քամին ավելի գժություն արավ. լավ ծառեր ճղակոտոր արավ. Մեր հարևանի այգու չարդախի սյուները ջարդեց, փուլ բերեց. գետի ջուրն էնպես եռ էր տալիս, էնպես, որ մարդ սիրտ չէր անի մոտենալ. գիժ է քամին, գիժ:

— Բա չես ասում, մեզ մոտ Նրանեակը, քամին ամառուայ շոգին մեզ զովացնում է . . .

— Ասենք, քամին լավություններ էլ է անում, բա էդ գժություններին ինչ ասենք:

Բու՜ ու՜, վու՜ ու՜ . . .

67. Պահապան ճնճղուկը

1.

Ճնճղուկների ձագերը նոր էին թևեր առել, նոր էին կանաչների մէջ թռչում, ուրախանում: Ծեր ճնճղուկը ծառի բարձր ճիւղին թառած՝ չորս կողմն էր նայում: Նա նայում էր, որ բազէն, ուրուրը կամ ագռաւը ձագերի վրայ չյարձակւեն: Յանկարծ նա տեսաւ մի բազէ. նա գալիս է դէպի իմ ձագերը, մտածեց ճընճղուկը:

2.

Ճի՜ւ ճի՜ւ ճի՜ւ... ճըչաց ծեր ճնճղուկը. փախէք, հեռացէք, ձագուկներ: Ձագուկները թըռան, թփերի մէջ թաք կացան: Բարկացաւ բազէն, սաստիկ բարկացաւ. Նրա սրատես աչքերը տեսան թառած ծեր ճնճուղին. արագ յարձակւեց վրան: Ճնճղուկը քնած չէր, նա քարի նման իրեն ձգեց թփերի մէջ և կորաւ:

68. Մատանը

(Ա յ ծ ը)

Կըտի-կըտի Մատանը,
Կըտիկը մտաւ բոստանը,
Ոտով մարգը տրորեց,
Գլխով հողը փորփրեց.
Ծուլի-ծուլի վեր ելաւ,

Իր պոչի հետ խաղ արաւ.
Բոստանչին էլ դուրս թռաւ,
Չար այծիկին ձեռք առաւ.
Տուեց, տուեց, տուր-տուեց,
Ջանը վրէն քըրըքըրեց.
Քամուն տուեց մազերը,
Տեղից հանեց պոզերը,
Հանած պոզերի տեղը
Լցրեց աղ ու տաքտեղը.
Քոլիկ դարձաւ Մաստանը,
Էլ չէր մտնում բոստանը։

---

69. Ցորենն ու գարին

1.

—Ի՜նչ լաւ է էստեղ՝ դաշտում, գիրուկ, ի՜նչ ազատ է. օդը մաքուր, երկինքը պայծառ, ասաց կարմրահատ ցորենը գարուն։

—Ճիշտ է, ճիշտ, պատասխանեց գարին։

—Հազիւ ազատուեցինք էն մութ ամբարից. ամբողջ ձմեռը իրար վրայ էինք թափուած, ոչ օդ կար, ոչ լոյս, խեղդւում էինք։

—Ի հարկէ, գիրուկ, էստեղ լաւ է։ Տես, ինչպէս գիւղացին գոգնոցի միջից սերմերն առած՝ շաղ է տալիս, ցանում է. բայց էն ո՞վ է մեր կողքին ընկած, տես ինչպէս փոքրիկ, կլոր և պսպղուն է։

—Դու ո՞վ ես, հարցրեց գիրուկը։

—Ես կորեկի հատիկ եմ, ասաց նա. ուրախ եմ, որ ձեզ մօտ ընկայ, ձեզ ընկեր եղայ։

2.

—Էս ի՜նչ գազան է, գիրուկ. ճյ, ճյ եսվախենում եմ. տես, ինչպէս նա սերմերը հաւաքում, ուտում է, ասաց կարմրահատն ու կուչ եկաւ։

Լաւ էր, գիւղացին եկաւ, ագռաւը թռաւ, թէ չէ՝ ցորենի սիրտը կը ճաքէր։



Մէկ էլ տափանն եկաւ, բոլոր սերմերը հողի տակ արաւ։

—Ես կորայ, ես կորայ, ասաց գիրուկը։

—Ես խեղդուեցի, ես խեղդուեցի, կանչեց ցորենը։

—Ի՜նչ մութն է, ի՜նչ ցուրտ է, կանչեց կորեկը։

Նրանք քնեցին։

3.

Անձրեւը մաղեց. երկիրը թրջուեց. պայծառ արևն էլ հողը տաքացրեց։ Սերմի հատիկները քիչ քիչ թրջուեցին, ուռան՝ մեծացան։ Նրանք մեծացան, այնչափ մեծացան, որ բարակ կեղևը ճաքեց, պատառուեց, ծիլեր դուրս եկան։

—Բա՛րև ձեզ, ծիլեր, ասաց քամին, նրանց համբուրեց։

4.

—Ո՜րչափ ուրախ եմ, որ լոյս եմ տեսնում, մաքուր օդ շնչում, ասաց գիրուկը։

—Ես էլ ուրախ եմ, կանչեց ցորենը։

—Դու է՞լ դուրս եկար, նոր ընկեր կորեկ,

ասաց ցորենը:

Էս շատ լաւ եղաւ, որ մէկ տեղ ծլեցինք, մէկ տեղ դուրս եկանք:

Տես, ինչպէս լաւ է արտուտը երգում:

Տես, ինչպէս լորը իր բունն է շինում:

Ի՞նչպէս արև է, ինչպէս լաւ տաք է:

Էլ մենք չենք մրսի, մենակ չենք լինի. ինչպէս կանաչ է, ամեն տեղ կանաչ:

5.

—Բարի լոյս ձեզ, ուրախ կանաչներ, ասաց ցողիկը, նրանց համբուրեց:

Արևի տակ ծիլերն ու ցօղը գոյն գոյն փայլեցին, զրկախառնւեցին:

—Ի՞նչ լաւ է ծլել, իմ ցանած արտը, ասաց գիւղացին:

Անցաւ գարունը, եկաւ ամառը: Գիրուկն ու ցորենը հասկեր կապեցին, լցւեցին, մեծացան, ներքև նայեցին:

Կորեկն էլ շատ շատ հատիկներ շարեց:

—Առատ հունձ կը տայ, ասաց գիւղացին և ուրախացաւ:

հատիկ.

Լոյսը բացւում է. ղուտ արտը գնամ,
Պատռեմ սուր խոփով եւ կուրծքը հողի.
Իմ սիրուն հատիկ ֆեղ նորան պահ տամ
Մինչեւ օրերն ամրան արեւի:

Ծլիր, կանաչիր, ոսկէ սաւանով
Ծածկիր իմ արտը ողջ ալէծածան,
Որ այն ժամանակ անուշ շրշիւնով
Ածուր զարդուած արտիս մի քուն հանգստեան:

71. Գիւղացու ընկերը

1.

Գարունը բացւեց. գիւղացին դաշտ դուրս եկաւ, գետինը վարեց, հողը փափկացրեց:

Սարեակն էլ գնաց գութանի յետևից, որդեր հաւաքեց, ձագերին կերակրեց։

Գիւղացին ցանեց, իր արտը տափնեց։

Սարեակը նրա մօտ ցատկեց, ճըղճղաց, մժեղներ հաւաքեց։

2.

Եկաւ ամառը, խոտերը հասան. ուրախ գիւղացին հանդը դուրս եկաւ։

Սարեակն էլ կանչեց, հնձող գիւղացու յետևից թռաւ, դաշտը դուրս եկաւ։

Գերանդին քաղում է, հնձած խոտերից բարդեր են կապում։

Սարեակն էլ ցատկում, երգեր է երգում, խոտերի միջից թրթուր, մժեղներ, հաւաքում՝ տանում։

Ժիր գիւղացին սայլը լծած՝ ուրախ երգերով՝ հնձած ցորենը, գարին, հաճարը իր տունն է տանում, կալում, կալսում է, ձմեռուայ համար պաշար պատրաստում։

Զւարթ սարեակն էլ իր ձագերի հետ երգելով, գովում է գիւղացու գործը, սուրբ աշխատանքը։

3.

Եկաւ աշունը. խումբ խումբ գիւղացիք սայլերը լծած քաղաք են գնում. քաղաք են գնում, ալիւր ու գարի, կորեկ ու կորկոտ, բանջար, ուտելիք բազարում ծախում, իրենց տան համար շորեր են առնում, ցաւերը հոգում, էլի տուն դառնում։

Ժիր սարեակներն էլ խմբեր կազմելով՝ գիւղացիների համար երգում են, ճանապարհ դնում։

---

72. Աշխատանքի ախպերը

Արի գնանք, եզը ջան,
Համ վար անենք, համ էլ ցան,

Աշխատանքի օրերը
Հրէս եկան, մօտեցան։

Գութանը դու կը քաշես,
Մաճկալդ էլ կը լինեմ ես,
Էն գլխիցն էս գլուխ
Էս փեշակն է պահել մեզ։

Արի գնանք, վար անենք,
Համ վար անենք, համ ցանենք,
Դառը քրտինք թափելով՝
Մեր ցաւերին ճար անենք։

Դու լաւ գիտես, եզը ջան,
Ո՛չ խոտ ունես, ո՛չ դարման,
Ո՛չ էլ մերոնք ուտելու
Զոր հաց ունեն էգուցւան։

Ամբարներս դատարկ են,
Ո՛չ գարի կայ, ո՛չ ցորեն,
Մերոնց բերնից կտրելով՝
Ցետ եմ գցել «սերմորէնք»։

Արի գնանք, ախպէր ջան,
Համ վար անենք, համ էլ ցան,
Պարապ-սարապ մնալուց՝
Ձեռն ու ոտս թուլացան։

---

73. Մարգարիտի սերմը

1.

—Ո՞ւր ես ինձ տանում, հարցրեց մարգարիտի սերմը։
—Քեզ տանում եմ պահելու, ձմեռուայ ցրտից ազատելու,

ասաց քամին։ Նա քշեց սերմիկը, տարաւ, մի աղբիւրի մօտ գցեց։

Սերմիկը կամաց կամաց գետնի մէջ թաղուեց և քնեց։

Գարնանը սերմիկը տաքացաւ, գետնից ջուր ծծեց, նրա հագուստը քիչ քիչ նեղացաւ, ճեղքուեց և նրա միջից մի բարակ ծիլ դուրս եկաւ։

2.

— Քունդ անուշ, մատաղ ծիլ, բարով եկար լոյս աշխարհ, ասաց քամին և նրան սիրեց։

— Շատ ուրախ եմ, հարևան, ասաց կապոյտ անմոռուկը։

— Մենք միասին ուրախ կը լինինք, ասացին սպիտակ ձնծաղիկները։

— Ես էլ ուրախ եմ, ասաւ կակաչը։ Գիտէ՞ք, ընկերներ, մարգարիտի ծնողներին ես ճանաչում եմ. նրանք դեղին միջուկով, սպիտակ թերթիկներով ծաղիկներ ունեն։

Մարգարիտի ծիլը շատ ուրախ էր, որ այդ տեսակ ընկերներ ունէր։ Նա մեծացաւ, մեծացաւ, շատ կոկոններ ունեցաւ։

Երբ ամենքը բացուեցին, ծաղիկները ուրախ ուրախնայեցին, շատ հաւանեցին։ Մեղմիկ քամին էլ հանդարտ փչեց, ծաղիկներին բարևեց ու գնաց։

Մարգարիտը ուրախ էր։

3.

— Հայրի՜կ, հայրի՜կ, եկ տես. ի՜նչ գեղեցիկ մարգարիտ եմ գտել, կանչեց մի փոքրիկ աղջիկ։ Օ՜հ, ինչքան սիրուն են, ինչքան նախշուն են, ես ուզում եմ տուն տանել։

Երբ հայրիկն էլ հաւանեց, աղջիկն արագ արագ քանդեց բոյսի չորս կողմը, հանեց, դրեց իր կողովը.

— Շոգ է, շոգ, ասացին ծաղիկները և գլուխները քաշ գցին։

Փոքրիկ աղջիկը մարգարիտը տարաւ պարտէզ և տնկեց մի վարդենու տակ։ Մարգարիտի արմատները ջուր խմեցին, յոգնած ծաղիկներն էլ կուչ եկան և քնեցին։

4.

Առաւօտեան փոքրիկ մարգարիտները վաղ զարթնեցին, զարմացած չորս կողմն էին նայում։

— Բարի գալուստ, դաշտի սիրուն ծաղիկներ, ասաց սպիտակ վարդը։

— Ես ձեզ երէկ էի ուզում բարևել, ասաց դեղին վարդը, բայց դուք շատ յոգնած էիք. ի՜նչպէս էք այժմ, լա՜ւ էք։

— Շնորհակալ ենք, ասացին մարգարիտները։

— Իսկ ես ձեզ կը ծանօթացնեմ մեր պարտէզի ծաղիկների հետ, ասաց կարմիր վարդը։

Ձեր աջ կողմի մեծ, սպիտակ ծաղիկները շուշաններն են։

Այն փոքրիկ Թագնըւածները հինգ Թեւանի մանուշակներն են։

Այս խումբն էլ մեխակներն են. նրանց մօտի փոքրիկը յափրուկն է։

Բոլոր ծաղիկները գլուխ տւին. փոքրիկ մարգարիտներն էլ խոնարհւեցին. նրանք խօսեցին, զրոյցներ արին։

Մարգարիտները մեծացան, գեղեցկացան և ամբողջ ամառը ծաղիկներ տւին։

Մի ծաղկով գարուն չի գայ։

74. Կոտ ու կես

Կոտ ու կէս գարի ունիմ ցանելու համար.
Տուն երկու եզ լծեցէք վարելու համար.
Տուն երկու մարդ տւէք տափնելու համար.
Տուն երկու մարդ տւէք ջրելու համար.
Տուն երկու մարդ ժողովէք քաղելու համար.
Տուն երկու մարդ ժողովէք կալսելու համար.
Ծնճղուկներ չեկնեն ցրւեն ուտելու համար։
Ա՛յ ճնճղիկ,
Սիպտակ փորիկ,
Կարմիր տոտիկ,
Ուտեն կուտիկ,
Խմեն ջրիկ
Ասւի եզրիկ,
Պատիկ մատիկ,
Փախչեն, երթան
Ման գալու համար։

Ժարաի ծուտերը.

Ժարան ամեն օր առաւօտից մինչև երեկոյ աշխատում էր. վրան հալ չէր մնում, յոգնում էր: փոքրիկ ծուտերն էլ փորձում էին դառնալ նրա գլխին:

— Ճուտերիս լավ նայիր, կտարող էս խոսքերն ականջին օղ արավ, էլ չէր մոռանում։

Առավոտը վեր կենալիս ամենից առաջ նայում էր ճուտերին։ Մի օր էլ տեսավ, ճուտերը հիվանդ են, չեն ճռճռում։ Սիրտը դող ընկավ. վազեց դրացի պառավի մոտ.—

— Նանի, այ նանի, ճուտերս հիվանդ են. ինչ անեմ, մի ճար արա, մի խելք սովորեցրու։

— Ժարբիկ ջան, մի աման ջուր եռացրու, ճուտերը մեկ մեկ մեջը կոխիր, հանիր ու արևը շարիր, կը լավանան։

Ժարբը գնաց, այդպես էլ արավ. երբ տեսավ, որ ճուտերը չեն շարժվում, վազեց էլի պառավի մոտ։

— Նանի, ճուտերս ժաժ չեն գալիս. ինչ անեմ, ինչ վայ տամ էս ժիմար գլխիս։

— Ժարբիկ ջան, բան չկա, քնած են, լուսով կը վարբեին, ասաց պառավը։

76. Կուրթանեցիք

I.

Լոռին որ կայ անտառոտ է,
Մուժ-մառախուղ ամպին մոտ է.

Եւ այդ Լոռում
Աստծու օրում
Խիստ Չրալը
Թոն է գալը։
Օրւան մէկը ողջ գիւղացիք,
Մեղքն ասողին, Կուրթանեցիք,
Իրար գլխի ժողովեցան,
Աղմկեցին, իրար անցան.
—Ա՛յ, մամլաքատ, ձեր Աստուածը,
Էս ի՞նչ է, ի՞նչ մեր քաշածը.
Ի՞նչպէս պրծնենք էս ամպերից,
Ամեն օրւայ ցեխից, Չրից։
Մէկը էղտեղ մաղը կծեց,
Թռաւ տեղից, ղունչը ցցեց.
—Կայ ու չկայ՝
Է՞ն է որ կայ...
Այ անիծւիս, դուշման անկուշտ,
Դու ես անշուշտ,
Որ բերում ես ամեն տարի
Շարան-շարան շարքն ամպերի,
Քշում՝ բերում գիւղի գլխին
Ու էս օրին գցում խալխին։
Ինձ լսեցէք, այ մամլաքատ,
Գիւղի մարդիկ, հարուստ, աղքատ.
Ով ինչ կարայ, թող վեր առնի,
Գիւղը կանգնի, շատ բան կանի։
Ամպերի դէմ գնանք կռիւ,
Տանք ու անենք ցաք ու ցրիւ.
Թէ չէ՝
Ի՞նչ է
Մեր քաշածը,
Հարամւել է
Մեր կերածը։
Ինչ ես ասում՝ կէս ժամ չանցած
Կուրթանեցիք ողջը զինւած՝
Որը դանակ
Ու դագանակ,
Որը մկրատ
Ու խաչ-երկաթ,
Որը աւել
Ու ցախաւել,
Որը բահը,
Որը թիակը,
Որը ցիցը
Իր սայլիցը,
Որը թառը՝
Որը կացին,
Որը ուրագ,
Որը ճիպոտ
Հաստ ու բարակ,
Որը մանգաղ
Ու գերանդի,

Որը փոցխը,
Որը սամի
Ձեռքերն առան
Ու դաշտ թռան,
Որ ամպերին տան ու ցրեն
Ու տիրոջն էլ գերի բերեն։
Կուրթանեցիք ցաք ու ցրիւ
Ամպերի հետ տալով կռիւ՝
Կանչում էին հա՜ իրարի.
«Դէհ, ժաժ արիք եկէն, արի,
Ցանէք՝ ցրէք, ա ձեզ մատաղ,
Ամպերն ընկան, տես, փա-
խէփախ»։
Էդտեղ մէկը՝ «կացէք, կացէք,
Էս տէրտէրին մի նայեցէք.
Սա որ իրա լուծն է բերել,
Սամու ծակերը չի կալել.
Վերևիցը էն ամպերը,
Նկատելով նեղ ծակերը,
Քուլայ, քուլայ բամբակ
դարձան
Ու ծակերից մտան, անցան»։
—Սևագլուխ, անմիտ երէց,
Տես քո լուծը մեզ ինչ արեց։
Կուրթանեցիք խեղճ տէր-
տէրին
Խիստ փրփրած՝ գետին դրին.
Տուր որ կը տաս կուշտ ու կո-
ղին,
Միրուքումը մազ չը թողին։

II.

Մի ձիաւոր կը գար հեռւից
Մի չալ քուռակ էլ ետևից.
Մէկ էլ պրծաւ հարայ-հրոց,
Մարդ չգիտէր որն էր որոց.
«Դէհ, ձեզ մատաղ, բերէք
գերի,
Սա է տէրը էն ամպերի»։
Բայց էն անձը
Քաշեց սանձը,



Քշեց իր ձին,
Զրնկաւ ցանցը,
Փախաւ՝ պըրծաւ.
Բայց քուռակը հլա մի ծին,
Հլա սովոր իր մօր ծծին,
Ազատ, կայտառ՝
Ճամփից ելաւ,
Ընկաւ անտառ։
Էն գիւղացիք հաւաքւեցին
Ու քուռակին պինդ բռնեցին.
—Դէհ, ասացէք, ի՞նչպէս ա-
նենք,
Որ քուռակից վրէժն հանենք.
Խորհուրդ արին,
Պայման դրին,
Որ շորերը
Ողջ բոլորը
Հագից հանեն,
Մի բեռն անեն,
Բառնան քուռկին,
Ճմլեն տակին.
Ստիպեցին
Եւ երէցին,
Բայց շապիկը
Նոկ չհանեցին։
Բեռ կապեցին շորերը
Ու շորերի էդ բեռը
Պինդ կապեցին քուռակին
Ու բաց թողին իր կամքին.
Էն քուռակն էլ խըրխնջալով՝
Անտառիցը դուրս փախչելով,
Տարաւ բեռը մէջքին կապած,
Կուրթանեցոց թողեց շշմած.
Կուրթանեցիք էն տէրտէրին
Էլի նորից գետին դրին,
Տուր որ կը տաս կուշտ ու
կողին,
Խեղճի վրայ ճար չթողին.
—Ասին՝ ա տէր,
Որ շապիկը
Բեռնում լինէր,
Էն քուռակը
Բեռան տակը
Զոր կը սատկէր։

III

Քամին ելաւ. աքան, ցաքան
Էն ամպերը վեր վար ընկան,
Թոնի շիթերը կախեցին,
Դաշտ ու անտառ ողողեցին։
Կուրթանեցիք ոլոր-մոլոր
Ողջն էլ թրջւած, ողջն էլ
տկլոր,
Ցուրտն ու դողը իրենց ա-
ռած,
Թափւան գիւղը կիսասառած։

---

77. Կեռասը

1.

—Բարով եկար, սիրուն Թռչնիկ, հազար բարով, անուշիկ. երգիր մեզ համար, ասաց ծառի ծայրին նստած կեռասը։

—Այս գիշեր շատ ցուրտ էր, ես մրսեցի, այնչափ մրսեցի, որ քիչ մնաց սառչէի։ Ա՛խ, այս մէկ թշիկս ինչպէս կարմրել է. իսկ այս մէկը դեռ կանաչ է. քանի՜ քանի անգամ



այս տերևին խնդրել եմ, որ արևից առաջ չառնէ, Նա չի լսում։

—Բան չկայ, փոքրիկ կեռաս, ասաց Թռչնիկը. արևը էդ մէկ Թշիկդ էլ կը կարմրցնէ։

Թռչնիկն երգեց. բոլոր կեռասները հանգիստ լսում, ուրախանում էին։

2.

—Ա՜յ, ա՜յ, օգնեցէք, օգնեցէք, կանչեց կեռասը. այս Թրթուրն ինձ ուտել է ուզում։

Թռչնիկը հասաւ, կտցեց Թրթուրին և կերաւ։

—Շնորհակալ եմ, բարի Թռչնիկ, շնորհակալ, դու իմ կեանքս ազատեցիր. այդ Թրթուրները իմ քոյրերից շատերին կերան չորացրին. ես ուզում եմ մեծ, սիրուն, կարմիր կեռաս դառնալ։

3.

Փոքրիկ կեռասը քիչ քիչ մեծացաւ, կաս կարմիր դարձաւ։ Նա ուրախ ուրախ չորս կողմն էր նայում, կարմիր Թշիկները ամենքին ցոյց տալիս։ Մի օր էլ եկաւ պարտիզպանը, սանդուղք դրեց և կեռասները քաղելով կողովը լցրեց։

—Ինչո՞ւ են քաղում, էս ո՞ւր են տանում իմ քոյրերիս, զարմացած ասում էր կեռասը։ Ես ամենաբարձր ճիւղի վրայ եմ, ինձ ոչ ոք չի հասնի։

Քիչ յետոյ ծառի վրայ էլ կեռաս չմնաց։

—Մենակ տխուր է, մտածեց կեռասը, էլ չարժէ ապրել։

4.

—Բարև քեզ, բարև, ասաց Թռչնիկը. ինչպէս տեսնում եմ մենակ ես մնացել։

—Այո՛, տխուր է, ասաց կեռասը. ես շատ ուրախ եմ, որ եկար. մի ասա՛, տեսնեմ, կեռաս սիրո՞ւմ ես։

—Այո՛, սիրում եմ, ասաց Թռչնիկը։

—Կտցի՛ր ինձ, Թող իմ Թշիկները քեզ բաժին լինին. դու ինձ կեանք տուիր, քո լաւութիւնը չեմ մոռացել։

—Բայց գիտե՞ս ինչ կայ, սիրելի Թռչնիկ, մի խնդիր ունիմ, էն էլ կատարիր։

—Ես քեզ համար ամեն բան կանեմ, ասաց Թռչնիկը։

—Կորիզիս մէջ մի բան եմ զգում. Նա պիտի ապրի, ծլի, մեծանայ, մեծ ծառ դառնայ։ Երբ դու ինձ ուտես, տար իմ կորիզը պարտէզում տնկիր։

—Պարտէզում դու չես կարող մեծանալ, ասաց Թռչնիկը, խոտը հնձելիս քեզ էլ կը կտրեն։ Ցանկապատի մէջ մի լաւ տեղ գիտեմ, այնտեղ կը տնկեմ, որ դու մեծանաս, սիրուն ծառ դառնաս։

---

78. Հաւի ընտանիքը

1.

—Կ՛րրթ, կ՛րրթ, կ՛րթ... Թուխս նստել եմ ուզում, կանչում էր բակի մէջ հաւը։



Պառաւ տատը հաւանոցի մի անկիւնում յարդից ու խոտից բուն պատրաստեց, քսան ձու դրեց։

Հաւը վրան նստեց տաքացրեց։ Նա ամեն օր համբերութեամբ սպասում էր և երբեմն իր ճուտերի մասին էր մտածում։ Արդեօք ամեն ձւից ձագ պէտք է դուրս գա՞յ. արդեօք նրանք վառեկներ են լինելու, Թէ աքաղաղներ. ինչպէս կուզէի, որ մի քանիսը

սիրուն աքաղաղներ լինէին, որ ամենքն էլ ասէին. տեսէք, տեսէք, ինչ գունաւոր փետուրներ, կարմիր, սիրուն կատար ունին։

Տասնիններորդ օրն անցաւ. ձուերը շարժւում են, բայց ճուտերը դուրս չեն գալիս. ինչ անել. նա կճեպը չէր ուզում կոտրել. վախենում էր միջի ձագին վնասի։

Աքաղաղն ասել էր, երբ ձագերը ոյժ ունենան, նրանք կճեպը կը ծակեն։ Չէ, էլի պէտք է համբերել։

2.

Քսանմէկ օրն անցաւ. հաւը խոր քնած էր. յանկարծ թևի տակ մի բան շարժւեց։ Նա ուրախութիւնից վեր թռաւ, ձագին լաւ ծածկեց։

Լուսացաւ. Նա տեսաւ իր առաջին ձագին, դեղին, փափլիկ փետուրներով, սև սև փոքրիկ աչքերով. ինչ գեղեցիկ է իմ ձագը. բայց ահա դուրս եկաւ երկրորդը, երրորդը...

Մայրը չէր իմանում, թէ քանի կտոր լինի, որ կողմը շարժւի. Նա վախենում էր, չլինի ոտներով ձագերին կոխատէ։ Պառաւ տատը օգնութեան հասաւ. Նա ձագերին դրեց բրդով սարքած զամբիւղի մէջ։

Միւս օրը հաւի թևերի տակից փոքրիկ ձագերը գլուխները դուրս հանած նայում էին։

3.

Տատիկը նրանց համար ճաշ պատրաստեց։—Կը՜րթ, կը՜րթ, կը՜րթ, կանչում էր մայրը. եկէք ճաշեցէք, ձագուկներս, եկէք կերէք, ճուտիկներս, ասում էր մայրը և կտցով կըտկըտացընում էր։

—Հիանալի է, ասաց մայրը. ձու և փափուկ խմոր, դէ՜հ, եկէք, կերէք։

—Ա՜յ, այդպէս կըտցէք։ Մէկէլ փորձեցէք. էլի, էլի. դու էլ փորձիր, փափլիկս, դու էլ, դու էլ. ա՜յ այդպէս։ Ճաշը վերջացաւ, ճուտիկները ջուր խմեցին, կրկին մտան մօր թևերի տակ։

4.

—Ձագուկներս, այսօր լաւ եղանակ է. արևն էլ տաք է. եկէք, ձեզ զբօսնելու տանիմ։

—Ծի՜կ, ծի՜կ, ծի՜կ, ծըլըլացին ճուտիկները։

—Լաւ, ասաց մայրը և հպարտ հպարտ նրանց տարաւ բակը։

---

79. Նանի նուերները

«Ծիփ-ծիփ, ծիփ-ծիփ, ա՜յ թըխսամէր,
Ճուտիկներիդ ա՛ռ, դէսը բե՛ր,
Կուտ եմ տալու ընտրած կորեկ՝
Եկէք, կերէք ու շուտ կորէք»։
Թուխսն եկաւ՝ կըրըխկալէ,
Ձագուկները՝ ծըւծըւալէ,
Եկան նանի դուռը դառան,
Ժըւժըւոցով գլուխ տարան։
Նանը նրանց կորեկ տւաւ.
Տես թէ ի՞նչպէս աքլար ու հաւ,
Մէկը միւսին կըտկըտալի,
Մեծ մեծ կուտին են վազ տալի։
Իսկ թոռները՝ տղայ ու աղջիկ,
Թընգթընգում են խունջիկ մունջիկ,
Որ նանն իրենց մէկ մէկ ընծայ,
Ձագուկներից բանի ու տայ։
«Տես էն ճուտիկ՝ կրմըշտուրիկ,
Քեզ եմ տալիս, սիրուն Սուրիկ.
Իսկ Գիսակին՝ սպիտակ ձագը,
Էն կուարար գիժ որձակը։
«Ձալտիկ ճուտն էլ, էյ Գայիանէ,
Լաւ պահպանիր, էն քո փայն է.
Սևուկ մևուկ աքլորիկն էլ՝
Թո՛ղ Իսկուհուն լինի նուէր։

«Իսկ ինձ միայ Թխսամէրը
Ու էն մարիկ ճուտիկները,
Որ մեծանան և ձու ածեն,
Նորից մէկ մէկ Թուխսը նստեն»։

Կռունկները ղարան – ղարան
,, կռու, կռու ,, կանչին ու եկան.
,, Գարունն եկաւ, գարունն եկաւ ,,
Անուշ կանչին ու եկան . . .

---

81. Կարմրախայտը

1.



Կարկաչահոս գետակի մէջ մի փոքրիկ ձուկ էր ապրում. նա սիրուն էր, գեղեցիկ էր, այնչափ սիրուն, որ ամեն մարդ կը ցանկանար նրան տեսնել. արևի տակ երբ լողում էր, ամբողջ մարմնի Թեփիկները փայլում էին։

2.

—Գեղարքունի, սիրուն ձկնիկ, ասաց մի օր կարմրախայտը. արի լողանք մի քիչ հեռու, խոր խոր տեղեր առաջ գնանք, տեսնենք ինչ կայ էն ջրերում։

—Ինձ էլ տարէք, ասաց մուրծան, փոքրիկ բեխերը ցցելով։

—Երկուս չլինինք, երեք լինինք։

Երեքով մէկտեղ առաջ գնացին. բայց մէկ էլ յանկարծ մի մեծ գայլաձուկ վրայ հասաւ, ուզեց բռնել, նրանց կուլ տալ։

3.

—Էդ փոքրիկները ինձ են պատկանում, չհամարձակւես կուլ տալ, ասաց մի կապուտ քարերի տակից. և գայլաձկի հետ կռւի բռնւեց։

—Ո՛չ, նրանք իմն են, ասաց մի կօղակ և վրայ պրծաւ։

Յանկարծ շըմբալով ուռկանն ընկաւ նրանց գլխին։ Բոլոր ձկները շփոԹւեցին, իրար անցան։

—Մենք կորանք, մենք կորանք ասացին ամենքը։

4.

—Էս ինչ ծանր է, ասաց ձկնորսը, ուռկանը քաշեց։

—Էս ինչ շատ որս է, ասաց ընկերը, ուռկանի միջից ձկներին հանեց։

Կարմրախայտն էլ նրանց մէջն էր, նա աղաչելով ձկնորսին ասաց.

—Ձկնորս, ա՜յ ձկնորս, Թող մի քիչ ապրեմ, ես դեռ շատ փոքր եմ, մի բանի պէտք չեմ. ես ապրել կուզեմ, խաղալ, մեծանալ. երբ քիչ մեծանամ, ես կը գամ քեզ մօտ։

—Հաւատա՞մ խօսքիդ, ասաց ձկնորսը։

—Այո՛, հաւատա՛, պատասխանեց ձկնիկը. ես խօսք եմ տալիս։

—Մի տարի քեզ կեանք, ասաց ձկնորսը և ազատ թողեց։

5.

Անցան շատ օրեր։ Կարմրախայտը ուրախ խաղում էր, քիչ քիչ մեծանում, մի օր էլ յիշեց, որ տասներկու ամիսն արդէն լրացաւ, ձկնորսի տուած ժամանակն հասաւ։

Կարմրախայտը մտածեց, տխրեց։

—Ինչո՞ւ ես տխուր, հարցրեց մի սևուկ։ Կարմրախայտը ամեն ինչ պատմեց։

—Ի՞նչ ես դարդ անում, ասաց սևուկը. գնանք, հեռանանք, ազատ՝ լաւ ապրենք. ի՞նչ անխելքութիւն, գնաս ձկնորսի ուռկանը մտնես։

—Ես խօսք եմ տուել, ասաց ձկնիկը։

Նա լողաց, գնաց ձկնորսին կանչեց։

Ձկնորսն իմացաւ և շատ զարմացաւ։

—Կարմրախայտ, ասաց ձկնորսը, քանի որ հաստատապահեցիր տուածդ խօսքը, ես քեզ ներում եմ. գնա՛, քեզ համար ուրախ կեանք վարիր և ազատ ապրիր։

Ասրի ապրեցնողը, ծաղկի ծաղկեցնողը։
Ջուկը գցեմ, ձուկն ուտեմ,
Մուկը գցեմ, ձուկն ուտեմ։

82. Գող կաչաղակը

1.

—Վա՜յ, քոռանամ, գլխին տալով լալիս էր Ջահել հարսը. ի՞նչ եղան իմ ոսկիներս, էս ո՞վ տարաւ, ո՞վ գողացաւ էս բակիցը։

Պառաւ նանն էլ խիստ զարմացաւ, դէս դէն ընկաւ, ամբողջ բակը լաւ քրքրեց, շատ ման եկաւ, ոսկիները չգտաւ։



—Էս թշնամու արած բան է, փրնթփրնթալով ասաց նանը. ինչե՞ր ասես մեր բակիցը չգողացան. էլ մատանի, էլ քորոցներ, էլ ասեղներ. դեռ երէկ էր, որ Լուսիկիս մեծ շարանով հուլունքները թռցրին։ Ա՛յ անիծուիս, դու, թշնամի, էս չափ փնտրես, ո՞վ մեզ կը տար, որ դու տուիր։

2.

Էս ժամանակ կաչաղակը ներքնայարկի լուսամուտից դուրս թռաւ, ղա՜ ղա՜ կանչեց, պառաւ տատին բարկացրեց։ Այսպէս ահա հարս ու կեսուր երկու շաբաթ տանջւեցին, շատ ման եկան, շատ հարցրին, կորած ոսկիները չգտան։

Կաչաղակը ամեն օր տան ներքնայարկն էր մտնում, կըչկըչալով դուրս էր թռչում, ծառին նստում։

3.

—Վա՜յ, անիծուիս, գող, աւազակ, չար կաչաղակ, ասաց նանը, վրայ հասաւ և ի՞նչ տեսաւ։ Ներքնայարկում մի պուտուկի չորս կողմումը կաչաղակը ոսկի, արծաթ, հուլունք, մատնոց, ասեղ, կոճակ և շատ բաներ առաջն ածած զընգզընգացնում, կտցով վերցնում, վեր-վար գցում, ուրախ ուրախ խաղ էր անում։ Երբ յանկարծ ներքնայարկի դուռը բացւեց, երբ պառաւը վրայ հասաւ, կաչաղակը արագ արագ պուտուկն ածեց, լուսամուտից շուտ դուրս թռաւ, ծառին թառեց, ղա՜ ղա՜ կանչեց։

—Ա՛յ աւազակ, չար չաչանակ, ասաց նանը, կորած իրերն առաւ բերեց՝ հարսին, թոռին աչքալուսեց։

Գող՝ սիրտը դող։

83. Կաչաղակ

Ա՛յ չաչանակ
Կաչաղակ,
Սիրուն թռչնակ,
Սարսարակ,

Ի՞նչ ես ընկել դռնէդուռ,
Բակ ու պարտէզ ու կտուր
Եւ մտքումդ էդ ի՞նչ կայ.

Քանի ճրչաս
Կրչ-կրչաս՝
—Ջրկմ-չրկմ,
Ջրկմ-չրկմ...

Մէկ էլ յանկարծ
Զայրացած,
Աւելի խիստ
Անհանգիստ,

Երկար պոչդ շարժելով,
Ի՞նչ ես բացում կտուցդ.
Եւ վրդովւած հոգուցդ

Ձայն ես տալի
Վշտալի՝
—Ջրկմ—չէ—չէ,
Ջրկմ—չէ—չէ...

Ես չոր ուտեմ.

Կէսօրուայ հացի ժամանակն անցել էր: Երեխաները շատ քաղցած են, անհամբեր դէս դէն են ընկնում: Վեց չարաճճի երեխաներ տունը ոտի տակն են առել.

— Եղիշ, նայիր, տես, Սաթիկն ինչպէս է երեսը թթուեցրել, բօ...

— Յուսիկ, լաւ հաւաս ունիս քաղցած փորիդ, հանաքներ ես անում. դու էլ ասա, մայրիկն երբ հաց կը տայ:

— Երանի քեզ, Սաթիկ, որ դեռ ուտելու մասին ես մտածում:

Վեց երեխայ, տանն էլ վեց ձու կար. մայրը վեց ձուն խաշեց ու բերեց. երեխաները ուրախութիւնից վեր վեր թռան:

Մայրն ամեն մէկին մի մի ձու տուեց, հաց տուեց...

— Վա՜յ, վա՜յ, մայրիկին բաժին չմնաց. մայրիկին բաժին չմնաց, ամեն կողմից կանչեցին փոքրիկները:

Բան չկայ, բալիկներս. իմ կերածը չուր է, իմ կերածը կորած է. ես չոր ուտեմ. ամեն մէկդ կէս կէս ձու տաք, ինչ հերիք է:

---

85. Բաղի ընտանիքը

1.

—Ի՞նչ կայ, բողար, հարցրեց հաւը շնից։
—Այսօր երկու նոր թռչուն են բերել այստեղ։
—Ի՞նչ թռչուն, ինչ բան, հարցրին հաւերը. հետաքրքիր է տեսնել։

Այդ ժամանակ ծառան զամբիւղից հանեց հայր ու մայր բաղերին։ Հաւերը զարմացած նայում էին։

—Մարդը կնոջից աւելի սիրուն է, ասաց մի հաւ. տեսէք, նրա գլուխը որչափ գեղեցիկ է ներկած։

—Իսկ կինը մեզ նման մոխրագոյն փետուրներ ունի, ասաց միւսը։

—Տեսէք, թէ ինչպէս անշնորհք են ման գալիս, ասացին մի քանիսը։

—Մայրիկ, տես, նրանց ոտքերի մատերի արանքում կաշի կայ, ասաց մի ճուտ։

—Մատերի արանքում կաշի… ծիծաղելի է, կրկնեց մայրը. ինչո՞ւ համար է այդ կաշին. չէ՞ որ էդպէս նրանք չեն կարող քչուջ անել։

—Հապա այն անճոռնի տափակ կտուցները, վրայ բերեց ուրիշը, կարծես իրար վրայ դրած երկու գդալ լինին։



2.

Բադերը գնացին բակի աւազանը և ջուրը մտան։

—Կը խեղդուէք, կանչեց աքաղաղը. ո՞ւր էք գնում։

Բադերը չլսեցին, նրանք լողալով հեռացան։

Հաւերը զարմացած նայում էին։

—Զարմանալի է, ասաց մի վառեկ. ո՞վ կարող էր մտածել, որ թռչունները կարող են լողալ։

—Դա երկար չի քաշի, ասաց ուրիշը. շուտով նրանք ջրի մէջ գլխկոնձի կը գան։

—Տեսէք, տեսէք, գլուխը կոխեց ջրի մէջ. էն ի՞նչ է անում։

—Ա՜յ, ա՜յ, օգնեցէք, մարմնի կէսը ջրի տակ գնաց, կանչեցին մի քանիսը։

Բադը գլուխը հանեց. նա կտցում ունէր խոտ. նրանք իրար մէջ բաժնեցին։

—Ուտում են, ուտում, ասաց մի հաւ. տես, հիմա էլ որդ հանեց. ա՜յ, գորտ էլ հանեցին՝ կերան։

Բադերը բաւական լողացին և դուրս եկան։

3.

—Շատ ուրախ եմ, որ ողջ առողջ յետ դարձաք, ասաց աքաղաղը. շուտ դուրս եկէք, թրջուած էք, կարող էք մրսել։

—Հանգիստ կաց, ասաց բադը. մենք ամեն օր իւղոտում ենք մեր փետուրները. ջուրը չի կարող մեզ թրջել։

—Կարո՞ղ ես մեզ քնելու տեղ ցոյց տալ։

—Ուրախութեամբ, ասաց աքաղաղը և տարաւ նրանց հաւանոց։

—Ա՜յ, այստեղ ձեզ համար պատրաստած է, ասաց աքաղաղը և բարի գիշեր մաղթեց։

Բադերը գլուխները կոխեցին թևերի մէջ և հանգիստ քնեցին։

Բադի ճուտը ձուից որ դուրս գայ՝ դէպի ջուրը կը վազէ։

86. Նանի հրաւէրը

«Բո՜ւլի-բո՜ւլի, բո՜ւլի-բո՜ւլի,
Իմ բադիկնե՜ր,
Եկէք, կերէք ախորժելի
Ձեր հատիկներ,
Հերիք ինչքան սառը ջրում
Լող-լողացիք,
Թև թափ տալով, դուք անդադրում
Ճըղ-ճըղացիք»։

Բադ ու բադիկ, կարմրաթաթիկ,
Նախշուն փետուր, դիփ խատուտիկ,
Ջւագլուխ, երկայնավիզ,
Տափակ կտուց, բաց կարմրամիս՝
Տուն գնացին օրօրւելով,
Ազիզ-մազիզ շօրօրւելով·

Տուն գնացին, գտան նանին,
Տանջանք դառան նանի ջանին.
—«Ջը՛ր-ճը՛րտ, չը՛ր-ճը՜րտ, ղա՜, ղա՜, ղա՜, ղա՜,
Բա՛ մեր կուտն էս ո՞ր տեղ ա…»։

Նանը գնաց ցորեն բերեց,
Առատ առատ գետնին փռեց,
Նրանք կերան լիք լիք բերան,
Կշտացան ու՝ հայդէ՜, կորան։

---

87. Ով է ուժեղ

—Ես եմ անտառի տէրը, ես եմ ամենից ուժեղը, ասաց բրդոտ արջը անտառի գազաններին։

—Ո՛չ, մարդն է, ճըչաց աղուէսը։

—Ի՞նչպէս ես համարձակւում այդպէս խօսել, աղուէս. ես



մարդուն կը ջարդեմ, բզիկ բզիկ կ՚անեմ, ասաց արջը։

—Իսկ ես նրան պատառ պատառ կ՚անեմ, վրայ բերեց գայլը։

—Կը տեսնենք, փընթփընթաց աղուէսը։

—Ես կը թռչեմ բարձր, շա՜տ բարձր, ամպերին կը հասնեմ, ասաց թռչունը. մարդը թև չունի, նա ինձ չի հասնի։

—Ես էլ կը լողամ, ջրի խոր տեղը կ՚իջնեմ, ասաց ձուկը. մարդը չի կարող ջրի մէջ ապրել, նա ինձ չի հասնի։

—Ես հողի մէջ հանգիստ կը պառկեմ, ասաց օձը. մարդը ինձ չի տեսնի և ոչինչ չի կարող անել։

Մարդը դուրս եկաւ հրացանն ուսին, մի ձեռքում թակարդ, միւսում ուռկան. ինչ արաւ մարդը։

Էն ինչ է
Սև ու մութ տուն, սատանան մէջը քուն։

Դաշտի վարդը.

Փոքրիկ տղան մի վարդ տեսաւ,
Սիրուն վարդը դաշտի միջին.
Ուրախ ուրախ շուտ մօտեցաւ,
Որ լաւ նայէ սիրուն վարդին։
Այ իմ վարդին, կարմիր վարդին,
Կարմիր վարդը դաշտի միջին։

89. Սարդը եւ շերամը

1.



—Ի՜նչ դանդաղկոտ անշնորհքն ես, ասաց սարդը շերամին։ Մի ինձ նայիր, տես, ինչպէս գործում եմ, բարակ թելեր, երկար թելեր շինում եմ. ես վազում եմ այդ թելերով վեր, վար, աջ, ձախ։ Տես, իմ գործած ոստայնը ինչ սիրուն է. իսկ դու նըստած հազիւ հազ ես շարժւում։

2.

Ի՜նչ ես պարծենում, ինչո՞ւ է պէտք քո ոստայնը. ամեն մարդ էլ նրանից զզւում է. սենեակները մաքրելիս քո ոստայնը դուրս են գցում։ Իմ հիւսածը մետաքս է. հարուստ, աղքատ, մեծ ու փոքր սիրում են, նրանից լաւ լաւ շորեր կարում են։

Աա Բբ Գգ Դդ Եե Զզ Էէ Ըը
Թթ Ժժ Իի Լլ Խխ Ծծ Կկ Հհ
Ձձ Ղղ Ճճ Մմ Յյ Նն Շշ Ոո
Չչ Պպ Ջջ Ռռ Սս Վվ Տտ
Րր Ցց Ււ Փփ Քք Օօ Ֆֆ.

---

91. Ջրի կաթիլի ճանապարհորդութիւնը

1.

—Ա՜խ, ինչպէս կուզեմ վերև բարձրանալ, վերև, շատ վերև, էն սարի գլուխը, էն ամպի մօտը, արևի քովը, աստղերին հասնել, ասաց մի կաթիլ։

—Ես էլ եմ ուզում, ես էլ եմ ուզում, ձայն տուին ծովից ջրի շատ կաթիլներ. վերև բարձրանալ, վերևից նայել, թէ ի՞նչ կայ էստեղ՝ աշխարհի վրայ։ Էնտեղից տեսնել սարեր, ձորեր, դաշտեր, անտառներ, քաղաքներ, ծովեր. ա՜խ, ինչ լաւ կը լինէր։

2.

Արևը լսեց, տաք տաք ճառագայթներ ներքև ուղարկեց,
Ջրի կաթիլներին նա վերև կանչեց։

Մեր կաթիլները քիչ քիչ տաքացան, անտեսանելի գոլորշի դարձան, վերև բարձրացան։ Նրանք բարձրացան, շա՜տ շա՜տ բարձրացան, սարերից վերև, ամպերին մոտեցան։

—Էս ինչպես բան է, ասաց կաթիլը. էսչափ բարձրացայ, էսչափ վեր ելայ, հէչ բան չտեսայ։

—Ափսո՜ս, շատ ափսոս, որ շատ յոգնեցի, ասաց ուրիշը. ես էլ չեմ կարող վերև բարձրանալ։

—Էստեղ շատ ցուրտ է, ասացին միւսները. շատ շատ դժւար է վերևում ապրել։

—Այո՜, այո՜, ձայնեցին ամենքը. ինչ լաւ կը լինէր առաջւայ նման՝ ներքև լինէինք։

3.

Արևը լսեց, ցուրտ քամի ուղարկեց։

Գոլորշիները քիչ քիչ մրսեցին, կուչ ու ձիգ արին, իրար մօտեցան, քիչ քիչ խտացան, տեսանելի դարձան։

—Ի՞նչ մութ ամպեր են, ասացին մարդիկ։

4.

Քամին սաստկացաւ, սև, մութ ամպերը իրար մօտեցան։

—Էս ինչպես ցուրտ է, ինչպես քամի է, ասացին նրանք՝ կաթիլներ դարձան։

—Ա՛յ, հիմա լաւ է, ասաց կաթիլը. այժմ ամեն ինչ ես լաւ տեսնում եմ։

—Մենք էլ ենք տեսնում, մենք էլ, կանչեցին բոլորը։

—Բարև ձեզ, բարև, սիրելի ընկերներ, ասաց կաթիլը. ինչպես լաւ եղաւ, որ կաթիլ դարձանք։

Մեր կաթիլները զրոյց անելով՝ հանգիստ ու հանդարտ ներքև են իջնում։

—Ի՞նչ լաւ անձրև է, ասացին մարդիկ։

5.

Խումբ խումբ կաթիլներ սարերի վրայից գոռում գոչելով ներքև են վազում. ներքև են վազում, հողը պատառում, ծառեր, ծաղիկներ քօքահան անում և առաջ գնում։

—Ի՞նչ վատ հեղեղ է, ասացին մարդիկ։

—Ես շտապում եմ, շուտ ճամփայ տւէք, ասում էր հեղեղը և առաջ գնում. այսպէս նա գնաց, շատ առաջ գնաց, հասաւ մեծ գետին։ Հեղեղն այստեղ շուտով կուլ գնաց և հանդարտ հոսեց։



Մարդիկ նաւերով ապրանք են տանում ջրի երեսով. ապրանք են տանում քաղաքից քաղաք, ապրանք են տանում ծովի այն կողմը։

Մեր կաթիլները վերջապէս հասան իրանց մօր գիրկը։

—Բարո՜վ եկաք, իմ կաթիլներ, ասաց ծովը։

Էն ինչ է

Կաթնաղբիւրից ջուր է խմում,
Արիւն ծովից ձէն է հանում։

92. Արեւն ու ծիածանը

Անձրեւից յետոյ ամպերի տակից դուրս նայեց փայլուն արեւը. երկնքի վրայ երեւաց գունաւոր, գեղեցիկ ծիածան։ Նա գեղեցիկ էր, այնչափ գեղեցիկ, որ ամեն մարդ կանգնած նայում էր։ Ծիածանը հպարտացաւ եւ պարծենցաւ, թէ ինքը արեւից էլ գեղեցիկ է։



Արեւն ասաց.—Ճշմարիտ է, դու գեղեցիկ ես. բայց չէ՞ որ առանց ինձ դու չես լինի։ Ծիածանը չհասկացաւ եւ արեւի վրայ ծիծաղեց։ Արեւը բարկացաւ, մտաւ ամպերի տակ, ծիածանն էլ անհետացաւ։

Էն ինչ է

Խալի ունեմ, թափ տալ չի լինի,
Ոսկի ունեմ, համրել չի լինի։

---

93. Խաշխաշ

1.

—Մայրիկ, ինչպիսի ծաղիկներ պէտք է դուրս գան այդ մանր, մոխրագոյն սերմերից, ասաց Արմիկը։

—Եթէ գեղեցիկ ծաղիկներ լինին, ես տատիկի համար փնջեր կը կապեմ, ասաց Աստղիկը։

—Ո՛չ, սիրելիներս, ոչ. այդ ծաղիկներն ինձ պէտք են. չպէտք է քաղէք, ձայն տուեց մայրը։

2.

—Սերմիկները ծլեցին. մի քանի շաբաթ յետոյ երկար ցողունների վրայ օրօրւում էին հաստլիկ, կանաչ կոկոններ։

—Արմիկ, տես, տես, ինչպէս սիրուն, ինչպէս նախշուն ծաղիկներ ունին խաշխաշները, ասաց Լուսիկը. տես, մի քանիսը կաս կարմիր են, մի քանիսն սպիտակ, միւսներն էլ

բաց մանուշակի են։

—Ինչու՞ մայրիկը մեզ արգելում է էդ ծաղիկներից փնջեր կապել. ինչու՞ թողնում է՝ սիրուն թերթիկները թափուեն, փչանան, հարցրեց Արմիկը։

3.

Մի երկու շաբաթ անցաւ. ծաղիկների տեղ օրօրւում էին կլոր, հաստլիկ բաներ։

—Հետաքրքիր է. ի՞նչ կայ սրանց մէջ, ասաց Արմիկը եւ մէկը կոտրեց. հուլունքի նման բազմաթիւ փոքրիկ սերմեր թափուեցին։

—Իսկ ի՞նչ համ ունի, ասաց Աստղիկը եւ համ տես արաւ։

—Ի՜նչպէս քաղցր է, ինքպէս համեղ է. Արմիկ, փորձիր։ Արմիկը փորձեց եւ շատ հաւանեց. մանուկները բաւական կերան, քիչ քիչ թմրեցին։ Մայրը զարմացաւ, երբ մանուկները ճաշի վրայ քնեցին. նա շատ աշխատեց նրանց արթնացնել. երբ չյաջողուեց, վախեցաւ եւ բժիշկ կանչեց։ Երբ մայրը գտաւ նրանց գրպանում խաշխաշի սերմեր, իսկոյն հասկացաւ քնի պատճառը։ Մանուկները շատ խոր քնեցին. երբոր արթնացան, մայրը բացատրեց թէ ինչ յատկութիւն ունի խաշխաշը եւ շատ ուտելը որչափ վնաս է։

---

94. Բամբակ

1.

—Էս ի՞նչ կորիզ է բամբակի մէջ, հարցրեց Օնիկը։

—Դա բամբակի սերմն է, պատասխանեց մայրը։

—Մի՞թէ բամբակն էլ սերմ ունի, մայրիկ. մի՞թէ բամբակը բուսնում է։

—Այո, այո, բուսնում է, ասաց մայրը։

—Որ այդպես է, կարելի՞ է այս կորիզը ցանել, մայրիկ։
—Կարելի է, կարելի, պատասխանեց մայրը։
—Օնիկը աման բերեց, մեջը հող ածեց, բամբակի կորիզը ցանեց, տաք սենեակում՝ արևի առաջ դրեց։



Նա օրէօր անհամբեր սպասում էր կորիզի ծլելուն։ Վերջապէս նա ծլեց, սովորական բոյսի նման կանաչ տերևներ արձակեց։

—Զարմանում եմ, ասում էր Օնիկն ինքն իրեն. էս կանաչի ո՞ւր, բամբակն ուր...

2.

Անցաւ մի քանի ժամանակ. բամբակի բոյսը բարձրացաւ, բարձրացաւ և կոկոններ բռնեց. մի օր էլ նա վարդագոյն և սպիտակ ծաղիկներով ծածկւեց։

—Մայրիկ, սա բամբակ չէ. սա մեր զանգակ ծաղիկի նման մի ծաղիկ է, ասաց Օնիկը։

—Քիչ էլ սպասիր, քիչ էլ համբերիր և դու կը տեսնես, ասաց մայրը։ Եկաւ օգոստոսը. Օնիկը նկատեց, որ ծաղիկների տեղ մեծ մեծ տանձաձև կոկոններ եղան։ Օնիկը չհամբերեց, նա մորից ծածուկ մի կոկոն պոկեց, ատամով կծեց։

—Էս ինչ փափուկ է, ասաց Օնիկը. օհո, էս ինչ քնքոյշ, սպիտակ է, իսկ մետաքս։

Օնիկը վազեց մոր մոտ։

—Քիչ էլ սպասիր, Օնիկ, քիչ էլ, ասաց մայրը. էդ կոկոնը պէտք է ուռչի, մեծանայ, պատառւի. էն ժամանակ բամբակն ինքն իրեն դուրս կը թափւի։

Էն ինչ է

Մի սար ունիմ՝ յետևը ձիւն է գալիս,
Առաջը՝ կարկուտ։

95. Կատաղի փիղը

1.

—Փախէք, փախէք, գոռում էին մարդիկ բազարում։
—Փիղն եկա՜ւ, փիղն եկա՜ւ, լսւում էր ամեն կողմից։ Կատաղած փիղը գոռում գոչիւնով վազում էր փողոցով։ Նա ճանապարհին ինչ որ տեսնում էր, երկար կնճիթով կոտրում, ջարդում էր, դէս ու դէն շպրտում։ Ամենքը վախեցած՝ խանութները թողած փախչում էին։

Կանաչի ծախող մի կին էլ շփոթւած՝ աղջկան թողեց ու փախաւ։ Փոքրիկ աղջիկը բարձր լալիս էր. նա աթոռից ընկաւ։

2.

Կատաղի փիղն երբ այստեղ հասաւ, իսկոյն կանգ առաւ։ Նա յիշեց կանաչի ծախող կնոջը. յիշեց, որ ամեն անգամ այստեղից անցնելիս բարի կինը իրան գազար, տակ ու կանաչի էր տալիս։ Նա հանգստացաւ. փոքրիկ աղջկան վերցրեց, մէկ աթոռին դրեց, մէկ գլխին, հետը խաղաց և հանգստացրեց։

Արած լաւութիւնը չի կորչի։

96. Առիւծը

1.

Ինչպէս պատահեց, գազանանոցից առիւծը փախաւ։
Կատաղի ձայնով նա մռնչում, փողոցով վազում էր։

Ամենքը սարսափած՝ թաք էին կենում։ Մի մայր էլ վախից՝ գրկած երեխին ձեռքից վայր գցեց։

Առիւծը մօտեցաւ, ուզեց պատառել։

2.

—Իմ որդուն մի ուտիր, իմ որդուն մի պատառիր, սարսափած կանչում էր մայրը։ Նա ծնկաչոք ձեռքերը մեկնեց դէպի առիւծը և որդուն խլեց առիւծի թաթերից։

Առիւծը կանգնեց և մտածեց. նա նայեց մանկանը. նայեց, նայեց՝ հեռացաւ։



3.

—Էլի եկաւ, առիւծը եկաւ, ասացին գիւղացիք և տները փախան։

—Ի՞նչպէս կատաղի մռնչում է, ասացին հովիւները և թաք կացան։ Պարսպապատ բակի մէջ գիւղի նախիրը դէս ու դէն կուչ եկաւ, քարացաւ։ Գամբռ շները ձայները կտրեցին, հեռացան։

Առիւծը եկաւ, բարձր պատերից բակի մէջ թռաւ, մի մեծ երինջի խփեց, մէջքը կոտրեց, բերանն առած՝ դուրս թռաւ։

97. Նապաստակի տունը

Նապաստակն ու աղվեսը

Անտառի մէջ, բարձր տեղում,
Որտեղ քամին պար էր խա-
ղում,
Նապաստակը տուն էր շինել
Ու աղուէսին դրկից եղել։
Տուն էր շինել, այն էլ փայ-
տից,
Պաշտպանւում էր տաքից-
ցրտից։
Աղուէսինը թէև լայն էր,
Թէև երկու աչքանի էր,
Բայց շատ ցուրտ էր՝ ողջը
ձիւնից,
Այդ էր եկել տիրոջ ձեռքից։
Բուք օրերին, ցուրտ ձմռանը,
Երբ վառւում էր վառարանը,
Տան օճորքից ջուր էր մաղում
Եւ աղուէսը մէջին լողում։
Մի օր եկաւ հալհըլոցը,
Տունը առաւ կաթկըլթոցը.

Դեռ չհասած մարտի կէսը,
Անտուն մնաց մեր աղուէսը։
—Ոտքդ պաչեմ, ա՛յ Շահզադէ,
Ցրտի ձեռքից ինձ ազատէ,
Մի անկիւն տուր տանդ մի-
ջին,
Ծառայ արա քո առաջին։
Խօսք եմ տալիս, ես ամէն օր
Լւամ, կարեմ քո հին ու նոր,
Եփեմ, թափեմ, քեզ ծառայեմ,
Տունդ, տեղդ կարգին պահեմ։
«Լաւ, ներս արի, դրկից աղ-
ուէս,
Բայց խնդրում եմ ինձ հետ
վարւես.
Կռիւ, ուշունց ես չեմ սի-
րում,
Հին բաներն էլ չեմ քրքրում»։
Ու աղուէսը մտաւ տունը,
Ճաշը կերաւ, առաւ քունը.
Քնից զարթնեց, դէս դէն
նայեց,
Տան տիրոջը խիստ հայհոյեց.
—Այ վայր տամ էդ քո գլխին.
Դու տան տէրը, ես աղախին.
Տան մեծ մասը քեզի պէտին,



Դռան տակը խան աղւէսին։
Դէհ դուրս կորչի,
Ծուռ աչք չըլտիկ.
Պոչ էլ չունի,
Սրան մտիկ։

Նապաստակն ու արջը

Նապաստակն իրանն առաւ,
Տունը թողեց ու դուրս թռաւ,
Յետ չնայեց, վազեց, լացեց,
Քեռուն գտաւ, ցաւը պատմեց.
—Այ իմ քեռի, ա՛յ արջ ապէր,
Էն աղւէսը՝ չար սրտամեռ
Փայտէ տունս ձեռքէս առաւ,
Դուռը փակեց իրանն արաւ։
—Քրոջ որդի, է, ամօթ չէ՞,
Որ դու կուլաս, քեռիդ սաղ չէ՞։
Արի գնանք, ես էն փչին։
Մի լաւ դաս տամ տանը միջին։

Քրոջ որդին, քեռի արջը,
Մին ետևը, մինն առաջը,
Եկան կանգնան տան դռանը,
Վառած գտան վառարանը։
Սրտոտ քեռին դուռը ծեծեց
Ու աղւէսին հերսոտ կանչեց.
—Տօ, փուչ աղւէս, ասա՛, ինչու
Էս իմ եթիմ քրոջ մանչու
Փայտէ տանը տէր ես դառել
Ու իրան էլ դուրս ես արել։
—Լաւ եմ արել,
Տէր եմ դառել.
Ձեռքէ գալիք
Մարդ խաբելիք։
Դէհ մի փքւէք,
Դռնից չքւէք։
Ու աղւէսը դռան ծակից
Վառարանի թէժ կրակից
Բերեց ցանեց արջի վրան,
Մի լաւ խանձեց դունչն ու բերան։
Փախաւ արջը դունչը այրած,
Քրոջ որդին հետը առած։

Նապաստակն ու Գայլը

Անտուն, անտէր Նապաստակը
Գնաց նստեց ծառի տակը,
Մաղիկ-մաղիկ մղկըտալով,
Ցաւն էր պատմում բարձր լալով.
— Ինձ լաւ խաբեց կեղծաւորը,
Դուրսը թողեց էսպէս օրը.
Անտուն, անտէր ես ինչ անեմ,
Մի տեղ չկայ միջին քնեմ։
Լացը լսեց գայլը դանդաղ,
Եկաւ ասաց՝ «այ քեզ մատաղ,
Ինչի՞ կուլաս մաղիկ-մաղիկ,
Կտրատելով սիրտ ու աղիք»։
—Է՜, գայլ եղբայր, բանս բուրդ է,
Վրէս բարակ, օրը ցուրտ է.
Էն աղւէսին թող չմնայ,
Տանս միջին գրողի գայ։
Նապաստակը
Ծառի տակը
Լացեց, լացեց
Սիրտը բացեց։
—Դու քեզ խղճա՛, իմ Նապաստակ...



Բայց մի կորցնի դու ժամանակ.
Գնանք ցոյց տուր էն աղւէսին։
—Է, քիչ առաջ, ինչ ասին...
«Է, քիչ խօսի, վեր կաց՝ գընանք,
Քո տան տեղը մի իմանանք.
Էն աղւէսին ես մի քաշ տամ,
Մեզ երկուսիս մի լաւ ճաշ տամ»։
Գայլ, Նապաստակ ընկան ճամփայ,
Եկան, եկան մին էլ ահա
Հասան՝
Տեսան
Մի վառ կրակ
Վրան կաթսան։
Ծեր աղւէսը գոգնոցն հագին,
Վրէն մաքուր արգին-կարգին՝
Դունդունալով ճաշ էր եփում,
Շերփով խառնում, քեափը թափում։
Կերակուրը իւ ղոտ-սոխոտ
Հոտ էր բուրում, մի անուշ հոտ,
Որ ծեր գայլին կալեց, կապեց,
Ախորժակը խիստ գրգռեց։
—Ինչ էլ լինի, ես աղւէսին
Բան չեմ ասի տանը մասին.
Կերթամ մօտը, կ՚ընկնիմ ոտը.
Դէհ աղւէսն էլ խօմ խամը չէ,
Որ քաղցածին չճանաչէ։
Ասաց գայլը, չոքեց դռան,
Բայց չը բացած լիզու, բերան՝
Աղւէսը այն
Հա յարձակւեց
Գայլի վրան,
Ճըչաց, գոչեց
Ձիլ բարձրաձայն։
—Կորիր, քաւթա՛ռ,
Սև ցաւը քեզ.

Նապաստակի պաշտպանին տես։
Էդ Ճրբ առար վկայական,
Դարձար գլխիս գէշ փաստաբան։
—Մի բարկանա, պարոն աղուէս.
Քո ցեղակից գայլիկն եմ ես.
Նապաստակի հետ ինչ ունեմ,
Եկայ քեզ մօտ, որ ճաշ անեմ։
—Խնդրեմ ներես ինձ, գայլ ախպէր,
Ջղային եմ ու անհամբեր.
—Քիչ սպասի, ճաշը հասնի,
Բայց որպէսզի կրակը չանցնի,
Խնդրեմ մի գաս՝ տակը փչես,
Գիտեմ, որ դու հպարտ էլ չես։
Գայլը իսկոյն կրակը փչեց,
Ու աղուէսը կաթսան շրջեց,
Ցիմար գայլի գլուխը խաշեց։

Գայլը սաստիկ ոռնաց, գոռաց,
Պոչի վրայ շատ ֆըռֆռաց,
Գլխի ցաւից ելաւ թռաւ,
Մի չորս ոտ էլ դեռ փոխ առաւ,
Հազիւ իրան գցեց բունը,
Հիւանդ պառկեց սաղ գարունը։

Նապաստակը եւ աքաղաղը

Անտուն, անտէր Նապաստակը
Դարձեալ եկաւ ծառի տակը.
Մաղիկ-մաղիկ մղկտալով,
Ցաւն էր պատմում
Բարձր լալով։
«Ինձ լաւ խաբեց կեղծաւորը,
Դուրսը թողեց էսպէս օրը.
Անտուն, անտէր ես ի՞նչ անեմ.
Մի տեղ չկայ միջին բնեմ»։
Ձայնը լսեց աքաղաղը,
Իսկոյն թողեց իրա խաղը,
Վազեց՝ եկաւ ծառի տակը,
Որտեղ կուլար Նապաստակը։

—Ինչի՞ կուլաս, այ իմ շըլտիկ,
Մի վեր նայի, մի ինձ մտիկ.
Հերիք ճմլես էդ աչերդ.
Որ կուրանաս ո՞վ է տէրդ.
Մի լար, մի լար, չարդ տանեմ,
Պատճառն ասա, մի ճար անեմ։
Նապաստակը աքաղաղին
Պատմեց եղածն իրա տեղին։
—Որ էդպէս է
Մի՛ սպասէ,
Էլ մի տզզա,
Հետս վըզզա,

Տան տէր դառի,
Ինձ մի վառի։
—Մժեղի պէս նրան կտցեմ.
Աղուէսն ինչ է՝ հետը մրցեմ.
Էնպէս գոռամ ձէնս փոխած,
Որ չքոտը տունը թողած՝
Էն մթնովը ելնի փախչի.
Էս աքլորը արջ ու գայլ չի։
Մութը մութին,
Ժամը ութին
Արագ, արագ
Առանց ճրագ
Հերոսները
Տունը հասան
Ու անսասան
Քաջը գոչեց ձայնը փոխած,
Ալ արիւնը աչքը կոխած։
—Ես ոչ արջն եմ, ոչ էլ գայլը.
Աշխարհք կ'առնէ չորիս փայլը.
Ես իշխանն եմ Մեծ Վարդերես,
Սուր եմ կախել հինգ գազ ու կէս։
Էլ չի պրծնի գող աղուէսը,
Թէ որ գտնեմ նրան ներսը։
—Ա՜յ, էս ո՞վ է Վարդերեսը...
Դուռը բացեց խան աղուէսը
Ու էն մթնով
Դիպաւ գետնով,
Լեղապատառ
Ընկաւ անտառ։
Աքաղաղն ու Նապաստակը,
Որ քաշում էր տան փափագը,
Տուն ներս մտան, սեղան նստան.
Հաշտ ու բարիշ լաւ ընթրեցին
Ու էդպէս էլ միշտ ապրեցին։

Ցանկ

I.

1. Գիր, ոտան. Մ. Մամիկոնեան . . . 3
2. Ո՞վ է ցանում. 4
3. Աշուն ոտան. Յ. Աղաբաբ 6
4. Կլէկչի կարօն. 7
5. Մարօի տնակը, ձեռագիր (ակ, հ) . . . 8
6. Ծառերի վէճը, փոխադ. 10
7. Խոզն ու կաղնին, Աթ. Խնկոյեան . . . 11
8. Չար մկնիկը փոխադր. . 12
9. Կատու, ոտան. ժողովրդ. ձեռագիր (եր, ներ) . . 13
10. Տերևներ, նմանողութիւն 15
11. Հանելուկ 15
12. Սրամիտ մոլլան, ժող. 16
13. Ուռենի ոտան. ձեռագիր (ենի, ել.), Աթ. Խնկոյեան 16
14. Ճանճը, նմանողութիւն 17
15. Արծուի սէրը, փոխադր. 19
16. Կռունկներ, ոտան. Պ. Մոճոռեան . . . 21
17. Խելօք մարդը, ձեռագիր (այ, ւ) նմանող . . . 22
18. Աքաղաղի ընտանիքը . 23
19. Աքլորն ու մարգարիտը, Աթ. Խնկոյեան . . . 25
20. Խելօք մրջիւններ, փոխ. 26
21. Ջրիկ տօլման, ձեռագիր (իկ, եր, ներ), ժողովրդ. 26
22. Մոլլի գրազը, ժողովրդ. 27
23. Մայրը, նմանողութիւն 28
24. Կապիկն ու ակնոցները, Աթ. Խնկոյեան . . . 29
25. Ձեռագիր նամակ (իկ, եր, ներ). 30
26. Քեռի կառապանը, փոխ. 31
27. Ջութակահարը, նման . 32
28. Հօտաղ Վարդանը, ձեռագիր (վ, ւ, օ) 34
29. Մոլլի մեղրը, ժողովրդ. 35
30. Իժը, փոխադր. 36
31. Աշուն, ոտան. Հ. Հայրապետեան 37
32. Անձրև, ձեռագիր (ոյ, այ) 37
33. Ժամկոչը և ուխտաւորը, ոտան. Պ. Մոճոռեան . 39
34, Ոզնին, փոխադր . . . 41
35. Տղան և թռչնիկը, ոտան. 43

II.

36. Ձմեռ, ոտանաւոր, Հ. Հայրապետեան 44
37. Շողիկը և Պէծիկը, Դ. Դեմիրճեան. 44
38. Նոր տարւայ նուէրը, Հ. Հայրապետեան 47
39. Դանակը, փոխադր. . . 47
40. Մոլլի ձին, ժողովրդ. . 49
41. Կառապան Օհանը, փոխ. 49
42. Մկի ընտանիքը, նմանող. 50
43. Բողարը, ձեռ. (ուկ, եօ). 52
44. Իլիկ, ոտան. Յ. Աղաբաբ 54
45. Դատաւորը, նմանող . . 55
46. Շիմօն (կապիկ), նմանող. 56
47. Ջիթով ձուածեղ, ձեռագ. (ո, ով, ւ) ժողովրդ. . . 57
48. Որբիկը, նմանողութիւն 59
49. Որբի պահանջը, Մ. Մամիկոնեան 59
50. Նուշիկի վիշտը, փոխադ. 60
51. Ղարիպ Մշեցին, ոտան. Աւ. Իսահակեան. . . . 61
52. Մոլլան դատաւոր, ժող. 62
53. Պուտուկը, ձեռ. (մեծատառերի և կէտադր. համար), Աթ. Խնկոյեան . . 63
54. Խորամանկ աղուէսը, փոխ. 64
55. Ճպուռն ու մրջիւնը, Աթ. Խնկոյեան 65
56. Մատանու մատը, նման. 66
57. Դարբին, ոտան. Կ. Մ. Շահնազարեան 68
58. Գուրգէնի փորձը . . . 68
59. Ցորեկ եղաւ, ձեռագիր (ա՛, իկ), ոտան. Աւ. Իսահակեան 70
60. Գիւղի հեռախօսը, Յ. Աղաբաբ 71
61. Տէրն ու ծառան, Յովհաննէս Թումանեան . . . 71

III

62. Գարուն, ոտան. Յ. Աղաբաբ 77
63. Գարնան հրաւէրը, նմանողութ 78
64. Մանուշակ, ոտան. Դողոխեան 80
65. Ձիւն և ձնծաղիկ . . . 80
66. Քամի, ձեռագիր (իւ, եա) 83
67. Պահապան ճնճղուկը, փոխադր 85
68. Մաստանը (այծը), ոտան. Աթ. Խնկոյեան 85
69. Ցորենն ու գարին . . . 86
70. Հատիկ, ոտան. ձեռագիր (ւ, ով), Յովհ. Յովհան... 89
71. Գիւղացու ընկերը . . . 89
72. Աշխատանքի ախպէրը, Յ. Աղաբաբ. 90
73. Մարգարիտի սերմը . . 91
74. Կոտ ու կէս, ոտ. ժող. . 95
75. Հարսի ճուտերը, ձեռ. (օ, յ, բառասկզբին), ժող. 95
76. Կուրթանեցիք, Աթ. Խնկ. 97
77. Կեռասը, նմանողութիւն 99
78. Հաւի ընտանիքը. . . . 101
79. Նանի նուէրները, ոտան. Յ. Աղաբաբ 103
80. Կռունկները, ձեռագ. (ռ) ոտան. Աւ. Իսահակեան . 104
81. Կարմրախայտը 104
82. Գող կաչաղակը, ժողովր. 106
83. Կաչաղակ, ոտան. Յ. Աղաբաբ 107
84. Ես չոռ ուտեմ, ձեռագիր (ե, բառասկզբին և միջին), ժողովրդ. 108
85. Բադի ընտանիքը . . . 109
86. Նանի հրաւէրը, ոտան. Յ. Աղաբաբ 112
87. Ո՞վ է ուժեղ, նմանող. 112
88. Դաշտի վարդը, ձեռագիր113 (մեծատառ. վարժ.), ոտան. Յովհ. Յովհաննիս.
89. Շերամն ու սարդը, փոխադր. 114
90. Ձեռագիր փոքր և մեծատառեր 115

IV.

91. Ջրի կաթիլի ճանապարհորդութիւնը 115
92. Արևն ու ծիածանը, փոխ. 118

93. Խաչխաչ, փոխադր. . . 118
94. Բամբակ, փոխադր. . . 119
95. Կատարի փիղը, փոխ. . 121
96. Առիւծը, փոխադր. . . 121
97. Նապաստակի տնակը, Աթ. Խնկոյեան 123
98. Ծանօթ. ձեռագիր յօդուածների համար . . . 130

ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ

1. Գիր. 8
2. Արագիլ 9
3. Մեղր 36
4. Ջիւն 46
5. Հրացան 113
6. Ամպ 117
7. Երկինքն ու աստղերը . 118
8. Բամբակ. 120

ԾԱՆՕԹ. 1. Ձեռագիր յօդուածները արտագրութեան համար են. դրանով կարելի է գրել կարդալը աւելի հիմնաւորել, աւելի խորացնել և հեշտութեամբ ուղղագրութեան վարժեցնել երեխաներին (տես, «Դասընկեր» ա. տ. Համ. բաց. գործածագր.)։ Ձեռագիր յօդուածները (ինչպէս և տպագիր) անպատճառ պէտք է արտագրութեան նիւթ դառնան այն ժամանակ, երբ դասատուի ղեկավարութեամբ յօդուածն ըմբռնել են երեխաները և վարժ կարդում են։

2. Ցանկում՝ ձեռագիր յօդուածների հանդէպ փակագծերում նշանակած հնչիւնները, երկբարբառներն ու ածանցները ցոյց են տալիս, որ իւրաքանչիւր արտագրութիւն պիտի ունենայ որևէ նպատակ և պէտք է գործնականապէս իւրացնել տալ ուղղագրական որոշ կանոններ։

4154
2013
ՀՀ Ազգային գրադարան
NL0059858

4-546/2-a

ԿԱԶՄԱԾ

ԳԻՆՆ Է 60 ԿՈՊԷԿ

ԴԱՍԸՆԿԵՐ Ա. ՏԱՐԻ կազմած 50 կ.
,, Բ. ՏԱՐԻ ,, 60 կ.

Պատրաստւում է

ԴԱՍԸՆԿԵՐ

Գ. ՏԱՐԻ

Պահեստը Գուտտէնբէրգ գրախանութում (Թիֆլիս)
Գումարով առնողներին զեղչ 20%

Ցանկացողները դիմեն Тифлисъ
Книжный Магазинъ Гуттенбергъ